22 ՕԳՈՍՏՈՍ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 143(4995)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

## Պաշտոնապես գրանցվեց Ռամկավար ազատական կուսակցությունը

ՌԱԿ Հանրապետական վարչությունը տեղեկացնում է, որ օգոստոսի 6-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետռեգիստրի գործակալության կողմից պաշտոնապես գրանցվել է Ռամկավար ազատական կուսակցությունը: Այս որոշմամբ պաշտոնապես վավերացվել են ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ կուսակցությունների հունիսի 3-ի միավորիչ-հիմնադիր համագումարի բոլոր որոշումները:

Հետեւաբար Ռամկավար ազատական կուսակցությունը հանդիսանում է ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ կուսակցությունների իրավահաջորդը եւ իրավաժառանգորդը: Այսուհետեւ Հայաստանում գործելու է միասնական Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ), որի ղեկավար մարմինը կոչվում է Հանրապետական վարչություն: Վարչությունը կազմված է 25 անդամներից, ատենապետությամբ Հակոբ Ավետիքյանի:

Հայաստանի Հանրապետությունում գործող Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) կանոնադրական եւ ծրագրային հիմնադրույթները իրենց արմատներով կապված են 1885 թ. Վանում ստեղծված Արմենական եւ 1921թ. Կ. Պոլսում հիմնադրված Ռամկավար ազատական կուսակցության գաղափարախոսության հետ:

Հայաստանում այսուհետեւ գործող ՌԱԿ-ը հանդիսանում է ռամկավարական եւ ազատական գաղափարախոսության կրողը եւ տարածողը Մայր հայրենիքում:

**ՌԱԿ Հանրապետական վարչություն**

*Երեւան. Կորյունի 19ա. 3-րդ. հարկ,*
*հեռ. 010-566845, 091-566845, 077-566845:*

## Մտնում ենք քաղաքական ակտիվ շրջան

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



Մեկ-երկու շաբաթ անց կսկսվի քաղաքական ակտիվ շրջանը, բայց զարմանալիորեն նույնիսկ այս տարվա շոգին ակտիվ շարժերը չդադարեցին, քանի որ հավանաբար մոտակա ՏԻՄ ընտրությունները թույլ չեն տալիս հիմնական քաղաքական ուժերին ձեռքերը ծալած նստել: Ու քանի որ առջեւում նախագահական ընտրություններ են` առաջգա նախագահի թեկնածուները հստակապես չեն կարող անտարբեր լինել, թե ովքե՞ր են տեղերում ապահովելու իրենց ապագա հաղթանակը կամ նպաստելու պարտությանը:

Հավանաբար նախ հիմնական մրցակցող ուժերը` ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն են շահագրգիռ սեպտեմբերի 9-ին եւ 23-ին ընտրությունների արդյունքում տեղերում իրենց ունեցած ավագանու անդամների եւ համայնքների ղեկավարների թվի ավելացմանը, ու նրանց անդուլ մրցակցությունը շանս չի թողնում կամ շատ քիչ շանս է թողնում ուրիշների համար, որքան էլ ցավալի է, որովհետեւ տեղերում առաջադրված ավագանու անդամների եւ համայնքների ղեկավարների թեկնածուների մեջ այլ կուսակցություններից ու անկուսակցականներից եւս բավական բանիմաց ու հարգանք վայելող մարդիկ կան: Վաղը տեղի կունենա ՀՀԿ գործադիր մարմնի հետարձակուրդային առաջին նիստը` նախագահ Սարգսյանի մասնակցությամբ ու վարմամբ, որտեղ հավանաբար կիստակվեն ՏԻՄ ընտրությունների հետ կապված հարցերը, տարածքներում ծագած խնդիրները կդիտարկվեն:

*Տես էջ 3*

## ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ

## Բանկային սանկցիաները շրջանցելու Իրանի հույսը Հայաստա՞նն է

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Բրիտանական Reuters լրատվական գործակալությունը երեկ հանդես է եկել «Բանկային սանկցիաները շրջանցելու Իրանի հույսը Հայաստանն է» վերնագրով հրապարակմամբ, որտեղ մասնավորապես այն տեսակետն է արտահայտել, որ «Իրանի դիվանագիտական քայլերը Հայաստանի ուղղությամբ վկայում են, որ միջազգային սանկցիաների տակ կքած իսլամական այս հանրապետությունն իր բանկային համակարգի եւ բիզնես բնագավառների ընդլայնման հարցում մեծ հույսեր է կապում Հայաստանի Հանրապետության հետ»:

Հրապարակման մեջ նշվում է, որ «Իրանի հետ առեւտրային սերտ կապեր ունեցող եւ դեպի Եվրոպական միություն ձգտող Հայաստանը կարող է օժանդակել Թեհրանին` օտարերկրյա գործընկերների հետ փողային տրանսֆերներ անելու հարցում եւ ավելի դյուրին դարձնել այդ փողային գործարքները միջազգային հետախուզական ծառայություններից թաքցնելու գործընթացը»:

Նշելով, որ հայ պաշտոնյաները հերքում են Իրանի հետ ապօրինի գործարքների առկայությունը, Reuters-ը վկայակոչում է Միացյալ Նահանգների` Իրանի նկատմամբ պատժամիջոցների հարցով հանձնախմբի ներկայացրած զեկույցը, որտեղ ասվում է, որ Իրանին բանկային գործարքների իրականացման օժանդակության հարցում ամենահարմար երկիրը Հայաստանն է, որը սահմանակից է Իրանին եւ որի «օրենսդրությունն ունի մի շարք թերություններ, որոնք թույլ կտան շրջանցել օրենքը»: Թե ի՞նչ օրենսդրական թերություններ են դրանք եւ ո՞ր օրենքն է շրջանցվում, հոդվածում չի ասվում:

Reuters-ի հրապարակման մեջ կան նաեւ որոշ սխալ տեղեկություններ` Հայաստանի բնակչության թիվը նշվում է 3,3 մլն, իսկ արդեն գործող Իրան-Հայաստան գազամուղի մասին նշվում է, որ նրա շինարարությունը կավարտվի 2014-ին:

Հայաստանի բանկերի միության ղեկավար **Աշոտ Օսիպյանը**, «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ» բանկի գլխավոր գործադիր տնօրեն **Ստեփան Գիշյանը** գործակալության թղթակցի հետ զրույցի ժամանակ հերքել են Իրանին ֆինանսավորելու մասին լուրերը: Reuters-ը տեղեկացնում է, որ համաձայն արեւմտյան հետախուզական գործակալությունների զեկույցի, բանկային համագործակցության հարցում Իրանի թիրախը հենց հայկական «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ» բանկն է:

*Տես էջ 4*

## Դիանա Սիրունյանի վիճակը մնում է ծանր

**Օգոստոսի 18-ին սրտի կաթվածից մահացած Վանո Սիրադեղյանի թիկնազորի պետ, վերջին տարիներին ակտիվությամբ քաղաքականությամբ զբաղվող Սուրեն Սիրունյանի հոգեհանգստի արարողությունը երեկ տեղի է ունեցել Ս. Հովհաննես եկեղեցում, որին մասնակցել են նրա ընկերները, համախոհները, հարազատները, քաղաքական ուժերի ներկայացուցիչներ: Լրագրողները նկատել են, որ ՀԱԿ-ից եւ ՀՀՇ-ից որեւէ երեւելի ներկայացուցիչ այնտեղ չի եղել` Ս. Սիրունյանը դժգոհ էր ՀԱԿ-ի վերջին շրջանի քաղաքականությունից եւ հեռացել էր ՀԱԿ-ից, մտերիմ մնալով էլի այդ կառույցից հեռացած ու «Ազատ դեմոկրատներ» կուսակցության անդամ մի շարք գործիչների հետ: Սուրեն Սիրունյանի վերջին ասուլիսը` կապված Վանո Սիրադեղյանի հետ, շատերը կհիշեն:**

**Նրա մահվան լուրն առնելով` 5-րդ հարկից իրեն նետելով ինքնասպանության փորձ կատարած նրա դուստր` Դիանա Սիրունյանի վիճակը երեկ երեկոյան դրությամբ մնում էր ծայրահեղ ծանր: Նա «Արմենիա» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում է, նրան արհեստական շնչառության ապարատ է միացված, բժիշկներն անում են հնարավորը` նրա վիճակի բարելավման համար:**

**Մ. Խ.**

## 10 միլիոն դոլար` հայ երեխաների համար

Հայաստանում հայ երեխաների կյանքի պայմանները բարելավելու գործում Հայաստանի կառավարությանն աջակցելու նպատակով Բրազիլիայի կառավարությունը կնվիրաբերի10 միլիոն դոլար ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան ներկայացուցչությանը: Այս մասին տեղեկացանք Երեւանում Բրազիլիայի դեսպանությունից: Սույն նվիրատվությունը նպատակ ունի աջակցելու Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի նախաձեռնած ծրագրերին, որոնք իրականացվում են զարգացող երկրներում խոցելի խմբերին` երեխաներին, հղի կանանց, պատանիներին ու մայրերին մարդասիրական օգնություն ցուցաբերելուն ուղղված ծրագրի շրջանակներում:

Նվիրատվության արարողությունը տեղի կունենա ՅՈՒՆԻՍԵՖ-ի երեւանյան ներկայացուցչության գրասենյակում օգոստոսի 24-ին:

**Ի. Պ.**

## Նախագահ Օլանդը Փարիզ է հրավիրել Կ. Պոլսո տիեզերական պատրիարքին

**Այդ մասին օգոստոսի 20-ի համարում տեղեկացնում է Timeturk.com կայքէջը: Տեղեկության համաձայն` Կ. Պոլսո հույն ուղղափառ եկեղեցու տիեզերական պատրիարք Բարդուղիմեոսը Ֆրանսիայի նախագահական ընտրություններից հետո շնորհավորել էր Օլանդին, իսկ նորընտիր նախագահը, ստանձնելով պաշտոնը, շնորհակալական նամակ է ուղարկել պատրիարքին:**

**Կ. Պոլսո հունաց պատրիարքարանի հրապարակած նամակում Ֆրանսիայի նախագահ Օլանդը բարի ցանկությունների համար շնորհակալություն է հայտնել տիեզերական պատրիարքին, ընդգծել է, որ ինքը ցանկանում է զարգացնել Ֆրանսիայի պատմական հարաբերությունները Հույն ուղղափառ եկեղեցու տիզերական պատրիարքարանի հետ եւ Փարիզ է հրավիրել ամենապատիվ պատրիարքին:**

**Հ. Չ.**

## Գազիանթեպի պայթյունը չի փոխի PKK-ի հետ բախումների` Թուրքիայի համար անբարենպաստ ընթացքը

### *Սակայն պատահական անցորդների սպանությունը կարող է քողարկել թուրքական բանակի եւ անվտանգության ուժերի ընկրկումը բախումներում*

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**

Օգոստոսի 20-ին` Ռամադանի եռօրյա տոնի առաջին օրը, երբ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության ներկայացուցիչները Անկարայում շնորհավորում էին մյուս կուսակցություններին` շրջանցելով քրդամետ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը, երեկոյան Գազիանթեպի (Այնթապ) կենտրոնում որոտում է հզոր պայթյուն:

Թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ` պայթյունը իրականացվում է ոստիկանատան մոտակայքում, ականված ավտոմեքենան հեռահար կառավարմամբ պայթեցնելու միջոցով: Նախորդ համարում «**Ազգը**» անդրադարձել էր միջադեպին, ներկայացնելով տուժածների մասին նախնական տվյալներ: Նախնական էին նաեւ թուրքական հանրայինի տվյալները: Հաջորդ օրը փոխվարչապետ եւ պետնախարար **Բեշիր Աթալայը** ճշտեց տուժածների թիվը: Ըստ Աթալայի, պայթյունի հետեւանքով քաղաքում զոհվել է 9 մարդ, 69 վիրավորվել է: Վիրավորվածներից 17-ի վիճակը ծանր է, 4-ը վերակենդանացման բաժնում են:

Թեեւ որեւէ կազմակերպություն պատասխանատվություն չի ստանձնել, ոչ էլ Աթալայն է կազմակերպության անուն նշել, սակայն թուրքական զանգվածային լրատվամիջոցները առանց հապաղելու պայթյունը բարդեցին «ահաբեկչական կազմակերպության», այսինքն` PKK-ի վրա: Այս առումով հատկանշական են թուրքական կենտրոնական թերթերը: Դրանցից կառավարամետ «Ենի Շաֆաքը» Գազիանթեպի պայթյունը լուսաբանել է «Ահաբեկչությունը թիրախ դարձրեց երեխաներին», «Թարաֆը»` «Տոնի օրերին կոտորած Անթեպում», «Վաթանը»` «Անիծյալ լինեք դուք», «Աքշամը»` «Կոտորած հեռահար կառավարմամբ», իսկ «Հյուրիեթը»` «PKK-ն նորից խաղաղ բնակչության կոտորած է սարքում» վերնագրերով:

Վերնագրերից ակնհայտ է դառնում, որ թուրքական թերթերը Գազիանթեպի պայթյունը համարելով ահաբեկչություն, ուղղակի կամ անուղղակի վերագրում են PKK-ին: Մինչդեռ ահաբեկչական յուրաքանչյուր գործողություն իրականացվում է որեւէ հարցի վրա հասարակական կարծիքի, ինչպես նաեւ միջազգային հանրության ուշադրությունը բեւեռելու նպատակով:

Դա ինքնանպատակ չի լինում: Այդ իսկ պատճառով էլ գործողությունից հետո իրականացնող կազմակերպությունը պարտադիր ստանձնում է դրա պատասխանատվությունն ու ստանձնման մասին ի լուր աշխարհի հայտարարում: Այլապես անիմաստ կդառնի իր իսկ իրականացրած գործողությունը: PKK-ն պայթյունի համար պատասխանատվություն չի ստանձնել, ոչ էլ նրա տեսանկյունից իմաստ ունի առանց թիրախը ճշտելու պայթյուն կազմակերպելը քրդաբնակ Գազիանթեպում, որ թիրախ դառնան պատահական անցորդները: Նա դրանով ընդամենը իր վրա կգրավի խաղաղ բնակչության զայրույթը, կդառնա ատելության թիրախ, ինչը պետք է շահագրգռի հենց թուրքական պետությանը:

*Տես էջ 2*

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

# Շնորհակալություն «Աքիլլեսին»

## *Բոլոր թերահավատներին հավատացնում եմ, որ կառավարությունը անպայման կհավաքի 2012 թ. բյուջեի լրացուցիչ 1 միլիարդ դրամը*

Այդ 1 միլիարդից շատ ավելին մի քանի ամսում արդեն մուտքագրվել է պետական գանձարան, բայց ոչ թե հարկատուներից, այլ՝ ավտովարորդներից:

Չե՞ք հավատում: Մտեք որեւէ բանկ եւ հատկապես փոստային բաժանմունք եւ կհամոզվեք: Այնտեղ դուք կտեսնեք հերթի կանգնած կարգազանց վարորդներին, որոնք ավելի շատ են եւ ավելի շատ են մուծում (10 հազ. դրամից մինչեւ մի քանի 100 հազար), քան պարտաճանաչ կոմունալ ծախսերը մուծող քաղաքացիները: Իմ ձեռքին է մայիս ամսվա 10-հազարանոց ակտերից մեկը, որի հերթական համարի թվերը անցնում է մեկուկես միլիարդից (հիմա արդեն 2 միլիարդը անցած կլինի): Հետեւաբար դեռ գարնանը մեկուկես միլիարդ խախտում են արձանագրել տեսախցիկները: Իսկ եթե այդ թիվը բազմապատկենք միջինը 10 հազար դրամով, կստացվի մի ահռելի գումար: Հիմա կասեք, թե այդ գումարների մի մասը չէ՞ որ տալիս են տեսախցիկների տերերին: Մի անհանգստացեք: Այդ գումարները այնքան շատ են, որ կհերիքեն նույնիսկ ուրիշ տերերի:

Ասածս սիրուն, չկարծեք, թե դեմ եմ կարգազանց վարորդների տուգանքներին: Ոչ, իհարկե ոչ: Կարգազանցներին պետք է ոչ միայն տուգանել, այլեւ նրանց մի մասին ընդհանրապես պետք է զրկել ավտոմեքենա վարելուց, որոշ դեպքերում էլ մեկուսացնել հասարակությունից:

ԵՍ ԴԵՄ ԵՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆՈՑԱԽԱՂԻՆ, ՄՏԱՑԱԾԻՆ ԵՎ ՃԱՐՊԿՈՐԵՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԲԵՄԱԴՐԵԼՈՒՆ, ՏԵՂԻ-ԱՆՏԵՂԻ ԴՐԱՄԱՀԱՎԱՔՈՒԹՅԱՆԸ:

Այսպես կոչված խստացումները գրեթե չեն նպաստում փողոցային երթեւեկության եւ դժբախտ դեպքերի կարգավորմանը: Նրանք ավելի են շատացել եւ հանդուգն դարձել: Փող ունեցողները ուղղակի շպրտում են դրամը, իսկ չունեցողները բարկությունից լարվում են եւ նյարդայնանում, կորցնում մեքենան հանգիստ վարելու ունակությունը եւ վթարի պատճառ դառնում:

Պետք է միշտ հասկանալ, որ փող հավաքելով (խցիկներով, թե ավտոմեքենայով) երբեք չեն կանխվի խախտումները: Շատերը ճանապարհային ոստիկանությանը համարում են օրենքով հաստատված ռեկետչիկներ: Ինչո՞ւ չենք վերցնում Վրաստանի լավ օրինակը, ինչո՞ւ ենք պահում ճանապարհային ոստիկանությունը, բյուջեի եւ որոշ մարդկանց համար փող հավաքելու նպատակո՞վ: Բերեմ ընդամենը մեկ օրինակ արդեն նշանավոր դարձած Ռուբինյանց փողոցից (դա Զեյթունի նախկին տրամվայի պտույտի փողոցն է), որտեղ փառահեղորեն կանգնած է Հայաստանի ամենաաղքատ մարդու բազմաթիվ առեւտրի պալատներից մեկը: Հունիսի 22-ին փոստով ստացա ճանապարհային ոստիկանության տեսախցիկով աշխատող թիվ 1200106615 ակտը, որտեղ գրված էր, որ ես մայիսի 28-ին խախտել եմ արագությունը, 40 կմ/ժամ արագության փոխարեն ընթացել եմ 54 կմ/ժ արագությամբ, որի համար տուգանվել եմ 10 հազար դրամով: Ժամանակին չմուծելու համար կպատժվեմ եռապատիկից հինգապատիկի չափով: Վախից անմիջապես մուծեցի եւ գնացի արգելման նշանը փնտրելու, սակայն ոչ մի տեղ այդ փողոցում չգտա 40 կմ/ժ նշանը, զանգահարեցի 56-29-74 ճանապարհային ոստիկանությանը: Ոմն Հարությունյան ինձ ասաց, թե լավ նայի՝ կգտնես: Ստիպված դիմեցի վարորդների իրավունքների պաշտպանության «Աքիլլես» կազմակերպությանը, որը ոստիկանների միջոցով գտել էր այդ չարաբաստիկ նշանը ծառի սաղարթների մեջ (տե՛ս լուսանկարը): Ոստիկանները անմիջապես ծառահատում էին կատարել՝ նշանը երեւալու համար, իսկ մեկ շաբաթ հետո ընդհանրապես հանել ու շպրտել էին այդ նշանը: Նույն «Աքիլլեսի» ստիպմամբ ոստիկանությունը ռադիո եւ հեռուստատեսությամբ տեղյակ պահեց ժողովրդին, «որ Ռուբինյան փողոցի բոլոր ակտերը չեղյալ են համարվում»: Իհարկե, ոչ մի բացատրություն կամ ներողություն չհայտնելով: Շնորհակալություն «Աքիլլեսին»: Չեք հավատա. տասնյակհազարավոր վարորդներ կամ մուծել էին, կամ էլ պետք է մուծեին: Միայն հարեւանս Ռուբինյանց փողոցից երեք ակտ էր ստացել: Նորից թույլատրվեց ընթանալ 60 կմ արագությամբ: Բանից պարզվում է, որ ոչ մի իրավունք չունեին այդ փողոցում 40 կմ/ժամ նշան դնելու: Այն կատարվել էր միայն փող հավաքելու համար: Իսկ մի՞թե միայն Ռուբինյանց փողոցն է: Ի՞նչ գիտեք, որ նման փողոցներ էլի չկան: Հենց միայն արձակուրդի մեջ երեք ամիս գտնվող դպրոցների առջեւի նշանները բավական են: Այո, սա է անհանգստացնում ինձ եւ շատերին: Այս մասին պետք է լուրջ մտածել: Մի՞թե սա ռեկետ չէ, պետական ռեկետ:



*Այսպիսի տեսք ուներ մինչեւ ծառահատումը կորած ճանապարհային նշանը*

P.S. Ինչ վերաբերում է իմ մուծած գումարին. երկու ամիս է անցել, բայց ոչ մի լուր չկա: Նորից զանգահարեցի: Պատասխանեցին, որ իմ դիմումը տեղ է հասել, բայց քանի որ Ռուբինյանց փողոցից կան հազարավոր ակտեր, հերթը դեռ ինձ չի հասել: Եվս երկու ամիս պետք է սպասել:

Արդյոք ճիշտ չի՞ լինի իրենց նման ուշացման համար պահանջել եռապատիկից հնգապատիկ գումար:

**Կ. ՔԱԼԱՇՅԱՆ**

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

# Հայերեն «բարի առավոտ» չեն ասում, էլի, նիեք

## *Մեր «բարի լույսը» նաեւ շատ ավելի տարողունակ է*

Ռուսները, ըստ իրենց լեզվամտածողության, լվացքը չորացնում են «արեւի վրա» (ասում են՝ сушить на солнце), հայերը՝ արեւի տակ: Արաբները, կարծեմ, Խոսաբի որդուն ասում են իբն Խոսաբ, ռուսները՝ Խոսաբիչ, հայերը՝ այսինչ, որդի Խոսաբի: Ռուսների համար ռուսաց լեզուն՝ իրենց եւ առհասարակ որեւէ ժողովրդի լեզուն՝ տվյալ ժողովրդի հարազատ լեզուն է (родной язык), անգլիացիները դա կոչում են բնիկ լեզու (native language), բայց ունեն նաեւ մայր(են)ի լեզու (mother tongue) տարբերակը, հայերս, որքան գիտեմ՝ նաեւ ֆրանսիացիները, իտալացիները, կոչում ենք մայրենի լեզու...

Այսօր, որքան էլ զարմանալի է՝ անկախ երկիր դառնալու առաջին օրվանից մինչեւ հիմա, մենք ինքներս կամավոր դարձել ենք մեր մայր լեզվին հաճախ քար նետողներ: Պետության բացարձակ անտարբերության պայմաններում ոմանք չիմացությունից ու անզգուշությունից, ոմանք ազգային այս կարեւորագույն արժեքը չկարեւորելու, օտար «արժեքներին» արհամարհաբար ստորադասելու կամ պարզ անտարբերության պատճառով կամա թե ակամա լծվել են մեր պետական լեզուն մինչեւ վերջ աղավաղելու, նրա կուռ համակարգը խաթարելու, մեզ մեր էությունից աննկատ հեռացնելու վտանգավոր գործին: Եթե առաջ մենք լեզու էինք սովորում մեր գեղարվեստական գրականությունից, նաեւ՝ մամուլից, ռադիո-հեռուստատեսությունից, ապա այսօր լեզվական աղավաղումները, սխալները, ամենօրյա տարբեր տեսակ մեղանչումները հասել են մամուլի, մասամբ նաեւ գեղարվեստական գրականության էջեր, ամեն օր հնչում, գրվում, տարածվում են հսկայազանգված լսարան ունեցող հեռուստաեթերով, էլեկտրոնային լրատվամիջոցներով, սոցիալական ցանցերով: Իսկ որ առավել մտահոգիչ է՝ դրանք նաեւ ունենում են համառ պաշտպաններ, այդ թվում՝ որոշ մասնագիտական համարվող շրջանակներում, հաճախ նույնիսկ այն տարօրինակ «հիմնավորմամբ», թե դրանք... հարստացնում են մեր լեզուն:

Հայոց լեզվում պարզապես ոստնատակ տվող բազմաթիվ տարածված սխալներ կան, որոնց մասին հատորներ կարելի է գրել: Կան նաեւ «թեթեւակի», անմեղ թվացող շեղումներ, որոնք հենց քիչ նկատելի լինելով՝ վերջին հաշվով կարող են ավելի վտանգավոր լինել: Կարծում ենք՝ վերջիններիս թվում է մասնավորապես «Շանթ» հեռուստատեսության «Առավոտը Շանթում» հաղորդաշարում ամեն օր հնչող «բարի առավոտ» արտահայտությունը: Կարծեմ սրա մասին այլ առիթներով ոչ մեկ անգամ խոսվել է, ասվել, բայց արի ու տես, որ առանձնանալու, ամեն գնով «սեփական» եւ «ժամանակակից» ոճով հանդես գալու ցանկությունը մեզանից ոմանց համար ավելի կարեւոր է:

Ո՞ւմ հայտնի չէ, որ հայի առավոտյան ողջույնը «բարի լույսն» է, որը նա ասել ու ասում է արդեն հազարամյակներ: Ո՞վ եւ ի՞նչն է մեզ ստիպում կամ ինչո՞ւ, ի՞նչ անհրաժեշտությամբ, ինչ իրավունքով պիտի մենք, մեզնից մեկը կամ մյուսը մի կողմ դնի մեր հազարամյա զրնգուն «բարի լույսն» ու... բարի լույս ասի օտար լեզվամտածողությամբ, ասի՝ բարի առավոտ: Որ անգլիացին ու ամերիկացին այդպե՞ս են ասում: Հետո՞ ինչ: Յուրաքանչյուր ժողովուրդ, ազգ հետաքրքրական է հենց իր ուրույն դիմագծով, այդ թվում՝ նաեւ իր լեզվական ուրույն դեմքով ու հարստությամբ, այլապես նա իրենից ոչինչ չի ներկայացնի: Եվ երկրորդ, թեեւ լեզուն որոշակի սահմաններում նաեւ անհատական դրսեւորումներ կարող է ունենալ, նա որեւէ մեկի սեփականությունը չէ, որ ով ինչպես ուզենա՝ ձեւի ու ծռմռի:

Իսկ դուք մտածե՞լ եք, թե մեր «բարի լույսն» իր իմաստային ընդգրկումով, հուզական լիցքով որքան ավելի տարողունակ, խորն է՝ ներառելով նաեւ հոգեղեն լույսի աստվածային խորհուրդն ու փառաբանությունը... Ինչո՞ւ ենք արհեստականորեն նեղացնում նրա շրջանակները, մերժում մեր լեզվագանձն ու, կրկնենք, մեզ հեռացնում մեզնից:

«Ժողովրդական երգիչ» անունով ծրագիր ստեղծած «Շանթին» հորդորում ենք հրաժարվել նման դիրքորոշումից:

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**
**Գյումրի**

# Գազիանթեպի պայթյունը չի փոխի PKK-ի հետ...

*1-ին էջից*

**Ինչո՞ւ: Մինչ հարցին պատասխանելը նշենք պայթյունի առնչությամբ «Ափոյի ֆիդայիների բանակի»՝ HPG-ի կենտրոնակայանի հրամանատարության օգոստոսի 21-ին տարածած հաղորդագրության մասին: Քուրդ ժողովրդին եւ Թուրքիայի հասարակական կարծիքին հասցեագրված հաղորդագրության տեքստում, որը հրապարակել է PKK-ին հարող Firatnews.com կայքը, ասված է. «Օգոստոսի 20-ին Անթեպի կենտրոնում պայթյուն էր տեղի ունեցել: Ե՛վ թուրքական պետության ղեկավարները, և՛ համանուն մամուլը ջանում են պայթյունը բարդել մեր շարժման վրա: Մեր ստորաբաժանումները որեւէ առնչություն չունեն պայթյունի հետ: Հասարակական կարծիքն ու մեր ժողովուրդը պետք է իմանան, որ մենք խաղաղ բնակչության դեմ որեւէ գործողություն չենք իրականացնում: Մեր ստորաբաժանումներն արդեն ենթարկվում են «Քուրդիստանի համայնքների միության»՝ KCK-ի տոնի օրերին բախումներից խուսափելու կոչին: Տոնի ընթացքում մեր ուժերը որեւէ այլ քայլ չեն ձեռնարկել, բացի ռազմական գործողություններին (թուրքական անվտանգության ուժերի ձեռնարկած) դիմակայելուց»:**

**Կարելի՞ է հավատալ PKK-ին կից կառույցներից HPG-ի հաղորդագրությանը: Ըստ երեւույթին՝ այո: Խնդիրն այստեղ սոսկ խաղաղ բնակչության շրջանում, այն էլ մեծապես քուրդ, PKK-ի նկատմամբ ատելություն սերմանելու միջոց հանդիսացող պայթյունի թուրքական պետական իշխանություններին ձեռնտու լինելու հանգամանքը չէ, այլ սկսած օգոստոսի 15-ից Հաքքյարիում, Շըրնաքում եւ Դերսիմում «ահաբեկիչների» դեմ թուրքական զինված եւ անվտանգության ուժերի լայնամասշտաբ ռազմական գործողությունների ընթացքը, որը թերեւս պայմանավորել են Թուրքիայի դեմ PKK-ի գլխավորած քրդական զինյալ պայքարի 28-րդ տարեդարձն ու Հյուսիսարեւելյան Սիրիայի քաղաքական զարգացումները:**

**Օգոստոսի 16-ին «Ազգը», անդրադառնալով տարեդարձին, որը լրացել էր նախորդ օրը, նշել էր, որ երկրի քրդաբնակ շրջաններում, մասնավորապես Հաքքյարիում, Շըրնաքում եւ Ջիզրեում, այդ թվում նաեւ Դերսիմում քուրդ երիտասարդությունը խանդավառությամբ պայքարի մեջ է մտել թուրքական անվտանգության ուժերի հետ: Օգոստոսի 15-21-ը, թուրքական էլեկտրոնային մամուլի խոստովանությամբ, սպանվել է 17 զինծառայող, 9՝ հենց Գազիանթեպի պայթյունի օրը, մահացել է զրահամեքենայի վթարից: Մահացածների համար հաջորդ օրը ցավակցություն է հայտնել վարչապետ Էրդողանը, չմոռանալով նաեւ պայթյունի զոհերին:**

**Օգոստոսի 15-20-ը սպանված զինծառայողների թիվը, ըստ Firatnews.com կայքի, 34 է, չհաշված երեք ոստիկանի եւ զրահապատ մեքենայի այսպես կոչված վթարի 9 զոհերին: Անկախ տվյալներից, եթե PKK-ն օգոստոսի 15-ից կարողացել է մինչեւ օրս դիմակայել թուրքական զինված եւ անվտանգության ուժերին, բանակի լայնամասշտաբ գործողությունների պայմաններում բախման մեջ մտել նրանց հետ, կազմակերպելով քրդաբնակ քաղաքներում հարձակումների ոստիկանատների, կայազորների եւ զորանոցների վրա, կնշանակի բախումների ընթացքը ամենեւին էլ Թուրքիայի օգտին չէ:**

**Այլ կերպ, թուրքական անվտանգության ուժերը քաղաքներում ընկրկում են քուրդ երիտասարդության, իսկ զինված ուժերը՝ բնակավայրերից դուրս, սարերում PKK-ի գրոհայինների առջեւ: Գազիանթեպի պայթյունը, ինչ խոսք, չի փոխի բախումների՝ Թուրքիայի համար անբարենպաստ ընթացքը: Սակայն պայթյունի հետեւանքով պատահական անցորդների սպանությունը կարող է քողարկել PKK-ի առջեւ թուրքական բանակի եւ անվտանգության ուժերի ընկրկումն ու PKK-ի հանդեպ խաղաղ քուրդ բնակչության զայրույթն առաջացնել, եթե, իհարկե, քրդերը կուլ տան խայծը:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# Առաջին հիմնահարցը մնում է արտագաղթը

Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ **Արամ Գասպարի Սարգսյանը** համարում է, որ այսօր մեր երկրի հիմնահարցն արտագաղթը կասեցնելն է: Խնդրի հրատապությունը վկայում են եւ վիճակագրական թվերը. ըստ պաշտոնական տվյալների՝ 2012 թվականի միայն առաջին 6 ամիսներին Հայաստանից արդեն հեռացել են 74 հազար հոգի:

Արտագաղթը, ըստ Արամ Սարգսյանի, չի սկսվել այս տարի կամ 4-5 տարի առաջ, այլ դեռ 1990-ականներից. միայն 1992-1993 թվականներին տարեկան 200 հազար մարդ էր հեռանում Հայաստանից, ու պատճառը ոչ թե պատերազմական գործողություններն էին, այլ՝ անիրավությունը: Այժմ արտագաղթի խնդրով անհանգստանալու փոխարեն, մեր լրատվամիջոցները, Արամ Սարգսյանի կարծիքով, տարված են երկրորդական ու երրորդական հարցեր քննարկելով:



Ըստ պարոն Սարգսյանի՝ միայն համակարգի փոփոխությամբ հնարավոր կլինի բարելավել ժողովրդի սոցիալական պայմաններն ու լուծել ներքին հիմնահարցերը: Իսկ համակարգը փոխելու համար, ըստ նրա, պետք է լուծվեն ստվերի, օլիգարխիայի, կոռուպցիայի ու մենաշնորհի հարցերը. սրանք են սյուները, որոնք պահում են այսօրվա համակարգը: «Եթե չքանդվեն դրանք, Հայաստանն իրական զարգացում չի ունենա», ասում է Արամ Սարգսյանը՝ ընդգծելով, որ Հայաստանը դեռեւս ունի բոլոր հնարավորությունները արդյունաբերական որոշ ճյուղեր նորից զարգացնելու համար:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների առնչությամբ Արամ Սարգսյանն ասում է՝ դրանք կանցնեն նույն սկզբունքով, որով անցան խորհրդարանական ընտրությունները: Փոքր-ինչ կտարբերվեն միայն նախագահական ընտրությունները, եթե այնտեղ իսկապես մրցակցություն լինի:

Արամ Սարգսյանն ասում է, որ ինքը չի առաջադրվելու 2013-ի նախագահական ընտրություններին. «Թեթեւսոլիկություն չանենք»:

Իսկ լրագրողներից մեկի դիտարկման վերաբերյալ, թե նախագահի հավանական թեկնածուների՝ Սերժ Սարգսյանի, Լեւոն Տեր-Պետրոսյանի ու Վարդան Օսկանյանի մեջ տեսնո՞ւմ է հաղթող լիդերի, պարոն Սարգսյանը նշում է, որ 3 հոգին էլ այն նույն համակարգից են, որը Դեմոկրատական կուսակցության համար անընդունելի է. «Հետեւաբար մեզ համար միեւնույնն է, թե այդ համակարգը ներկայացնող ո՞ր անձն ավելի շատ հնարավորություններ ունի: Այնուամենայնիվ Սերժ Սարգսյանը հնարավորություն ունի օգտվելու իր բոլոր լծակներից, որովհետեւ նրան հիմա լուրջ խանգարող չկա»:

Իսկ ՀԱԿ-ին բանախոսը չի համարում իշխանության այլընտրանք. «Հիմա ՀԱԿ կա՞, որ նրանց էլ այլընտրանք համարեմ: Ու սկզբից եւեթ ՀՀՇ-ի գաղափարախոսությունը մեր կուսակցության համար եղել է անընդունելի: Նույն Հրանտ Բագրատյանի կառավարման օրոք վերցվել են մեծ քանակությամբ վարկեր ու պարզապես մսխվել: Ու հիմա Հայաստանն ունի 4 միլիարդ դոլարի վարկային պարտք, որից որեւէ դոլարը չի ծախսվել էկոնոմիկան զարգացնելու ուղղությամբ»:

Ինչ վերաբերում է Վանո Սիրադեղյանի վերադարձին, Արամ Սարգսյանն այս թեման հրատապ չի համարում: «Եթե Վանո Սիրադեղյանն ուզում է բացահայտ ասել՝ ի՞նչ է եղել 90-ականներին ու ինչո՞ւ է ինքը հեռացել երկրից, թո՛ղ գրի ու գրավոր ուղարկի այդ մասին», հավելեց Արամ Սարգսյանը:

Երեկվա ասուլիսի ժամանակ, պատասխանելով նաեւ Եվրասիական միությանը Հայաստանի միանալ-չմիանալու հարցին, եթե ապագայում ստեղծվի նման միություն, Արամ Սարգսյանը նշեց, որ դրան կողմ կլինի այն դեպքում, երբ առաջին հերթին տեսնի Եվրասիական միության ձեւավորման հեռանկարներն ու դրանում Հայաստանի շահերը:

Ի. Պ.

# Գյուղացիների անունից՝ գյուղացիների դեմ

## *Ո՞ւմ շահերն է պաշտպանում ագրարագյուղացիական միությունը*

Հասարակական կազմակերպությունները (ՀԿ) սովորաբար ստեղծվում են արտահայտելու եւ պաշտպանելու հասարակության շահերը նրան հուզող այս կամ այն հարցի վերաբերյալ: Սակայն Հայաստանում, ՀԿ-ների, համենայն դեպս, մի զգալի մասը ստեղծվում է անձնական շահերը որպես հասարակական ներկայացնելու եւ հասարակության ու պետության շահերին դեմ գնալու նպատակով: Օրինակ, մարդու իրավունքների պաշտպանության նպատակով ստեղծված մի քանի ՀԿ-ներ օրուգիշեր զբաղված են մեր բանակին վարկաբեկելով: Սպառողական շահերի պաշտպանությանը կոչված որոշ ՀԿ-ներ զբաղվում են բացահայտ բիզնեսով՝ խոսելով այս կամ այն ընկերության արտադրանքի լավ լինելու մասին եւ փնովելով նրա մրցակցի արտադրանքը:

Գյուղատնտեսության ոլորտում գործող ՀԿ-ներից մեկը՝ Հայաստանի ագրարագյուղացիական միությունն էլ ասես ստեղծված լինի գյուղացիների շահերին դեմ գնալու համար: Կազմակերպության եւ նրա նախագահ **Հրաչ Բերբերյանի** գործողություններն էլ ոչ այլ ինչ են, քան դրա վառ ապացույց:

Դեռեւս անցյալ տարվա աշնանը վերոնշյալ կազմակերպության ղեկավարը սովորականի նման հանդես եկավ մի քանի արտառոց հայտարարություններով: Նրա «կանխատեսմամբ», այս տարի կարտոֆիլի բերքը այնքան կլինի, որքան անցյալ տարի, իսկ գարնանը կարտոֆիլը կթանկանա եւ ամռանը կկազմի 300-400 դրամ: Բնականաբար, նրան ոչ ոք չհարցրեց, թե ի՞նչ հիմնավորմամբ է նման հայտարարությամբ հանդես գալիս ագրարագյուղացիական միության նախագահը, մանավանդ որ, նրա խոստովանությամբ, եղանակային պայմաններն էլ բարենպաստ էին:

Եկավ գարունը, ապա ամառը, կարտոֆիլի բերքն ավելի շատ եղավ, քան «մարգարեանում» էր Հրաչ Բերբերյանը, իսկ գինն էլ կազմեց ոչ թե 300-400 դրամ, այլ 80-100 դրամ, առավելագույնը՝ 150 դրամ: Տուժեցին այն գյուղացիները, որոնք հավատալով վերոնշյալ անձնավորությանը, ավելի քիչ կարտոֆիլ աճեցրին՝ այն հույսով, որ դրա գինը թանկ կլինի եւ իրենք ավելի քիչ չարչարանքով, ավելի քիչ բերքը ավելի թանկ վաճառելով ավելի մեծ եկամուտ կստանան: Ստացվե՞ց, որ Հրաչ Բերբերյանը գյուղացիների շահերը պաշտպանելու փոխարեն նրանց շահերի դեմ գործեց:

Նույն անձնավորությունը նույն կերպ կանխատեսում էր ծիրանի բերքի քիչ լինելու մասին, ասելով, որ «թվեր են նկարում»: Բերբերյանի չարագուշակ եւ բարեբախտաբար երբեք իրականություն չդարձող կանխատեսումն այն էր, որ ծիրանենիներն այս տարի զանգվածաբար վարակվել են սնկային հիվանդությամբ, որը կփոխանցվի նաեւ դեղձենիներին եւ ծիրանի ու դեղձի բերքի մեծ մասը այս տարի կկորցնենք: Սակայն, անկախ նրանից, թե ով ինչ թիվ է նկարում եւ ագրարագյուղացիական միության նախագահն ինչ չարագուշակություններով է զբաղվում, փաստ է, որ նրա ասածը սուտ դուրս եկավ: Մեզանից յուրաքանչյուրը կարող է փաստել, թե այս տարի որքան առատ էր ծիրանի եւ դեղձի բերքը եւ ինչ գնով գնեցինք:

Սակայն հատկապես ցնցող էր վերոնշյալ պարոնի հետեւյալ արտահայտությունը պարարտանյութերի պետական սուբսիդավորման մասին. «Որոշ պետական այրեր այդ բիզնեսն իրենց ձեռքը վերցրին: Մանրածախ ներկրողները հրաժարվեցին ներկրելուց, եւ այսօր ունենք արհեստական դեֆիցիտ պարարտանյութերի շուկայում: Պետությունը խառնվեց բիզնեսին, տեսանք՝ ինչ եղավ»: Իսկ «ի՞նչ եղավ», քանի՞ գյուղացի կգտնվի, որ կդժգոհի, որ պետությունը պարարտանյութերի սուբսիդավորում է իրականացնում եւ իր վրա է վերցնում նրա հոգսի մի մասը: Դա կոչվում է «պետությունը խառնվեց բիզնեսի՞ն»: Կամ այդ ի՞նչ ներկրողներ հրաժարվեցին պարարտանյութ ներկրելուց: Այն ներկրողները, որ պարարտանյութի գների չհիմնավորված բարձրացման համար տուգանվեցին տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից: Հիմա ագրարագյուղացիական միության նախագահը գյուղացիների՞ շահերն է պաշտպանում, թե՞ այդ ներկրողների: Գուցե գյուղացիների շահերը պաշտպանելուն կոչված վերոնշյալ անձնավորությունը եւս ներգրավա՞ծ է այդ բիզնեսում, իսկ իր ՀԿ-ն այդ բիզնեսին ծառայեցնելու նպատակո՞վ է ստեղծել: Այսպես թե այնպես, դատելով վերոնշյալից, միանշանակ է, որ Հրաչ Բերբերյանը չի կարող խոսել գյուղացիների անունից, քանի որ նա անմիջականորեն նրանց դեմ է գործում եւ խոսում: Եվ երկրորդը՝ նա չի կարող համարվել գյուղատնտեսության ոլորտի մասնագետ, քանի որ նրա բոլոր գնահատականները, որպես կանոն, հիմնավորում չեն ունենում, հետեւաբար նրա բոլոր կանխատեսումները դատարկ խոսքեր են դառնում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Մտնում ենք քաղաքական ակտիվ շրջան

*1-ին էջից*

ԲՀԿ-ում էլ սպասում են Գագիկ Ծառուկյանի վերադարձին արտերկրից, որպեսզի վերջինս որոշի, թե ովքեր պետք է ԲՀԿ-ական առաջադրվածներից ԲՀԿ աջակցությունը ստանան, օրինակ՝ Մասիսի քաղաքապետի երեք ԲՀԿ-ական թեկնածու է առաջադրվել, ու երեքն էլ սրտատրոփ սպասում են Ծառուկյանի որոշմանը: Այս կուսակցությունների հստակեցնող որոշումներից հետո կարելի կլինի այս ՏԻՄ ընտրությունների ընդհանուր միտումները տեսնել, սակայն այս գլխից էլ երեւում է, որ ՀՀԿ-ն ուզում է ընդլայնել իր ներկայությունը ՏԻՄ կառույցներում:

Գյումրիում, Վանաձորում, Արմավիրում, Մասիսում, Սիսիանում եւ այլ տարածքներում հետաքրքրական մրցապայքար է սպասվում. երկուսի օրինակով ամրապնդենք մեր խոսքը: Սիսիանում թեեւ ՀՀԿ-ական թեկնածու կա, սակայն տեղացիների քաղաքապետի պաշտոնի համար հիմնական թեկնածու են համարում ԲՀԿ եւ ՀՅԴ ներկայացուցիչներին, ընդ որում՝ այս երկու կուսակցությունների նույն ներկայացուցիչները հիմնական մրցակից էին նաեւ նախորդ ընտրություններում, ու ԲՀԿ ներկայացուցիչը փոքր առավելությամբ է հաղթել: Այս իմաստով հետաքրքրական է, թե ինչպես կպահի իրեն ՀՀԿ-ն: Կամ Գյումրիում թվում է, որ Վարդան Ղուկասյանն անցնում է անցյալի գիրկը, ու ԲՀԿ-ից Սամվել Բալասանյանը, որ այս դեպքում հավակնում է ՀՀԿ-ԲՀԿ միասնական թեկնածու լինել, հիմնական ֆավորիտ է, սա եւս մի պահ կարող է խաբուսիկ լինել, քանի որ այսօր ջանքեր են երեւում ներքին սեպ խրել ԲՀԿ-ականների մեջ, ասելով, որ ԲՀԿ-ականներից ոմանք դժգոհ են Բալասանյանի առաջադրումից, քանի որ նա մի շարք կուսակցություններ է փոխել, ու ենթադրություններ են արվում, որ նա ընտրվելուց հետո էլ կարող է ՀՀԿ-ական դառնալ:

Է, գուցե եւ հորինվածք է, ինչպես որ Նաիրա Զոհրաբյանի պարզաբանումներից կարելի է եզրակացնել, սակայն եթե մի մարդ համեմատաբար կարճ ժամանակում մի քանի կուսակցություններ է փոխում, նրա առումով որեւէ խոսք երաշխիք չի կարող լինել, մանավանդ որ բոլորն են հիշում Բալասանյանի ասած թեւավոր դարձած խոսքը, թե իր ճակատին ՕԵԿ է գրված: Գումարած՝ վերջերս հայտնի դարձավ , որ քաղաքապետարանի աշխատակից, ՀՅԴ թեկնածու Հովսեփ Սիմոնյանին աջակցելու է նաեւ «Ժառանգությունը», եւ նա կարող է տանել Գյումրիում վատ սոցիալական վիճակի պատճառով առկա բավական ընդդիմադիր ձայները: Իսկ այն խոսակցությունները, որ Վարդան Ղուկասյանն իր ռեսուրսն ու ֆինանսական միջոցները ծախսելու է, որ ապագա ավագանիում իր կողմնակիցներն ընտրվեն՝ գուցե ծուխ է, բայց գիտենք, որ առանց կրակ ծուխ չի լինում: Այնպես որ բավական հետաքրքրական պայքար է սպասվում:

Իսկ ընդհանրապես՝ ընդամենը մեկ-երկու շաբաթից կսկսվի ակտիվ քաղաքական կյանքը, որի գլխավոր առարկան, թեման կամ նյութը, սակայն, նախագահական ընտրություններն են՝ գարնանից մնացած այն ինտրիգով, թե ի վերջո ՀՀԿ-ի թեկնածու գործող նախագահից հետո էլ ով է հավակնում հիմնական ֆավորիտների շարքում լինելու հայտ ներկայացնել: Քանի որ ցավով պետք է նշենք, որ մեր նախագահական ընտրությունների հավակնությունները այդպես էլ մնացին երեք նախագահների ծիրում, ու նոր իրականություն չունեցանք՝ այդ իրականության մեսիջները կրող նոր հավակնորդ-թեկնածու այդպես էլ չուրվագծվեց: Եթե առաջին նախագահը քաղաքական սուղ լծակների տիրապետման առումով գուցե չպետք է հավակնի առաջադրվել (սակայն դա չի նշանակում, որ նա անսպասելիորեն չի ցանկանա առաջադրվել), ապա երկրորդ նախագահը, ինչպես ասում են, տարբեր ճանապարհներով գծերն է ստուգում՝ առաջադրվի, թե՝ ոչ:

Իսկ մյուս թեկնածուների առաջադրումը գուցե սիմվոլիկ է՝ հիմնական ֆավորիտ լինելը կասկածի տակ լինելու առումով, սակայն չենք բացառում, որ կարող է ստեղծվել այնպիսի պահ, որ առաջադրվեն Գագիկ Ծառուկյանը, Րաֆֆի Հովհաննիսյանը, Վարդան Օսկանյանը, գուցե ՀՅԴ-ն սեփական թեկնածու ունենա (ու մենք ուրիշների պես չենք կարծում, որ դա Րաֆֆի Հովհաննիսյանն է լինելու), թեեւ բոլոր այս թեկնածուների չառաջադրման համար բավական պատճառներ կան, թելեր, որոնց ձգողները կանգնած են հարմար պահին դրանք ձգելու: Օրինակ՝ վաղը Հայաստանի վերաքննիչ դատարանը քննում է Օսկանյանի ներկայացուցչի բողոքն ընդդեմ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի որոշման, ըստ որի մերժվել էր Օսկանյանի դիմումը՝ վերացնելու փողերի լվացման հատկանիշով քրեական գործի հարուցման որոշումը: Վերաքննիչի որոշումից կարելի կլինի որոշ բան եզրակացնել՝ արդյոք դեռեւս վախ կա՞ Օսկանյանի առաջադրման հեռանկարից, թե այդ հարցը «լմնցել» է:

Իսկ Վանո Սիրադեղյանի վերադարձի խոսակցությունները առաջին եւ երկրորդ նախագահների չառաջադրման շրջանակում են, քանի որ ով-ով՝ Սիրադեղյանը բոլորից ավելի իրազեկված մարդկանցից է Հայաստանի բոլոր երեք նախագահների առումով, ու գուցե կան շրջանակներ, որ ուզում են օգտագործել նրա իրազեկված լինելը: Սակայն Սիրադեղյանը երեւի բոլորից լավ էլ կպատկերացնի, որ քաղաքականությամբ զբաղվելն անվտանգ չէ Հայաստանում, եւ խելքը կհերիքի՝ չդառնալու ուրիշների թղթախաղի կոզըր, թեկուզ հայրենիք վերադառնալու գնով: Իսկ որ խաղը մտնում է վտանգավոր փուլ՝ վկայում է թեկուզ երկրորդ նախագահի գրասենյակի ղեկավարի նյարդային արձագանքը «Ռեգնումի» այն հրապարակմանը, թե երկրորդ նախագահն է Հայաստանի ստվերային տնտեսության աջակիցը: Այդ կարգի լրատվական «ռազբորկաների» ականատեսը դեռ շատ կլինենք:

Իսկ այս օրերին տագնապալի լուրեր են հասնում Հալեպից, երեկ, օրինակ, լուր կար, թե Հալեպի հայկական թաղամասերն անցել են ապստամբական ուժերի վերահսկողության տակ, եւ ըստ տարբեր տեղեկությունների՝ վերջին օրերին Հայաստան ժամանած սիրիահայերի թիվը կազմում է 4 հազարից ավելի: Սա խնդիր է, որը ոչ միայն մեր գործադիր կառույցներին պիտի վերաբերի, միայն նրանք պիտի տեղեկացված լինեն եւ աշխատեն, այլեւ քաղաքական ուժերը պետք է լավ պատկերացնեն այս հարցի ե՛ւ քաղաքական, ե՛ւ տնտեսական, ե՛ւ աշխարհաքաղաքական ռակուրսները, որպեսզի նրանց վերաբերյալ հարցումներին գրագետ եւ իրադրությանը չվնասող պատասխան հնչեցնեն:

ԱԶԳ

## Հարցազրույց

# «Առավելություն եմ համարում ինձ համար, որ հայ ժողովրդի հետ եմ եղել»

*Հարցազրույց բարոնուհի Քերոլայն Քոքսի հետ*

**- Պատմության ընթացքում շատ թշնամիներ է ունեցել մեր ժողովուրդը: Սակայն քիչ չէին բարեկամները նաեւ, որոնցից մեկն էլ՝ անձամբ Դուք: Ինչպե՞ս կարող էիք բնութագրել Ձեր զգացմունքները հայ ազգի նկատմամբ: Ի՞նչ է Ձեզ համար նշանակում Հայաստանը, եւ ինչպե՞ս պատահեց, որ Դուք պատասխանատվության պես մի բան զգացիք հայության հանդեպ, կամենալով ինչ-որ կերպ օգտակար լինել մեզ:**

- Առավելություն եմ համարում ինձ համար, որ հայ ժողովրդի հետ եմ եղել կարեւոր այն ժամանակահատվածում, երբ դուք պաշտպանում էիք ձեր պատմական Արցախը: Պատերազմի ընթացքում ես բազում անգամներ եմ ձեր ժողովրդին այցելել՝ մարդկանց հասցնելով հումանիտար օգնությունը, ինքս եմ ականատես եղել այն ամենին, ինչ մասին հետո հարկ եմ համարել խոսել բարձրաձայն: Վերոհիշյալ այցելությունների ընթացքում էլ զգացել եմ միշտ, թե ինչպիսի ոգեշնչման առիթ է անձնապես ինձ համար ձեր ժողովրդի արժանապատվության զգացողությունը, ձեր ազգի զավակների կողմից ցուցաբերվող խիզախությունը, հյուրասիրության վառ ու հրաշք օրինակները, եւ, այո, առավելություն եմ համարում, որ այդ օրերին շատ ու շատ հերոս-հերոսուհիների հետ եմ հանդիպել ու շփվել: Աշխատանքիս մեջ առաջնային պարտականությունս եմ համարում օգնությունն այն մարդկանց, ովքեր ենթարկվում են հետապնդման ու տարբեր կարգի ճնշումների: Այդ իմաստով, ոչ միայն Ղարաբաղի հայերն են ուշադրությանս կենտրոնում հայտնվել, այլեւ այնպիսի երկրների, ինչպիսիք են Բիրման, Սուդանը, Հյուսիսային Նիգերիան, Հյուսիսային Ուգանդան եւ այլն, բնիկ ժողովուրդները:

**- Մեր նորագույն պատմության էջերում Ձեր անունն իր ուրույն տեղը ունի եւ Ղարաբաղի հետ է կապված սերտորեն՝ հայկական մի վայր, որ հայտնի տեղ է զբաղեցնում Ձեր կենսագրության էջերում: Ինչպե՞ս կարելի է բացատրել այն երեւույթը, որ մեկ անգամ Արցախին ծանոթանալուց հետո Ձեր հետաքրքրությունը նրանով շարունակական դարձավ: Ինչպե՞ս եք Դուք, լեդի Քոքս, Լեռնային Ղարաբաղը ներկայացնում հենց Ձեր երկրում եւ այլուր: Որո՞նք են, ավելի լայն իմաստով, մինչ այժմ Արցախից ստացված Ձեր տպավորությունները:**

- Ճնշումներ իրագործող վարչակարգերի զոհերին օգնության եւ պաշտպանության իմ պարտականությունները ի կատար ածելու առաջադրանքով ես 70 անգամ արդեն Արցախ եմ այցելել: Հատկապես վերջին տարիներին այն արդյունքներով եմ տպավորված խորապես, որոնք ձեր ժողովուրդը ձեռք է բերել՝ վերակառուցելով քարուքանդ եղած իր երկիրը եւ մարդկային քանդված ճակատագրերը: Դրա հոյակապ վկայություններից մեկը Վարդան Թադեւոսյանի ծավալած հրաշալի գործունեությունն է, ում մասնագիտական մոտեցման շնորհիվ հիմնադրվեց Ստեփանակերտի վերականգնողական կենտրոնը: Դա այնպիսի մի նվիրվածությամբ է արվել, որ միջազգային մակարդակով հիմա որպես «առաջատար փորձի կենտրոն» է հայտնի: Ամեն անգամ, երբ Արցախ եմ այցելում, ինձ մշտապես հիացնում են ձեր ժողովրդի համառությունն ու հնարամտությունը, ինչպես նաեւ այն ոճը, որով մարդիկ այդտեղ կարողանում են պահպանել ու պաշտպանել իրենց ոգին ու տեսակը. Արցախն այսօր ոչ միայն մոխրից հառնած Փյունիկին է նման, այլեւ մի հրաշքի, երբ փլատակների մոխրից մարդիկ կարողանում են գեղեցկություններ վեր հանել:



*Արթուր Ղուկասյանը եւ բարոնուհի Քերոլայն Քոքսը*

**- Այսօր էլ դեռ աշխարհի ամենատարբեր վայրերում կրկնվում է հրեշավոր այն երեւույթը, որ Ռաֆայել Լեմկինը ցեղասպանություն է անվանել: Այդ երեւույթի շարունակականության հիմնական պատճառն արդյոք այն չէ՞, որ համայն մարդկությունը չի ընդունել մինչ օրս հայերի դեմ իրագործված ոճրագործությունը: Եվ. որո՞նք են, ըստ Ձեզ, Մեծ Եղեռնի համընդհանուր ճանաչումն արգելող հանգամանքները:**

- Հայերի ցեղասպանություն. դուք տեղյակ եք երեւի, որ այս թեմայով ես շատ եմ խոսել եւ հնարավոր ամեն քայլի դիմել, որ հարցը գոնե համաշխարհային ճանաչում ստանա: Աշխատել եմ այն ժողովուրդների շրջանում, որոնք կրել են բռնության հետեւանքները եւ այդ ընթացքում, ցավոք, շատ այլ իրավիճակների եմ հանդիպել, որոնք կարող են «ցեղասպանության փորձեր» համարել: Այդպիսին են, օրինակ, Բիրմայի էթնիկ խմբերի դեմ իրականացված դաժան ռազմական հարձակումները կամ խտրականությունները, որոնց առաջացման պատճառն էր Հյուսիսային ու Հարավային Սուդանի միջեւ տեղի ունեցած պատերազմը, ինչպես նաեւ մեկուսացված տարածքներում արձանագրված փաստերը (Նուբայի Սարեր, Հարավային Կապույտ Նեղոս, Աբիեյ, որը հիմա կոչվում է Դարֆուր): Առաջին պատերազմի ժամանակ երկու միլիոն մարդ զոհվեց, եւ չորս միլիոնն էլ տեղահանվեց: Այդ պատերազմի ակնհայտ նպատակները աֆրիկյան ժողովուրդների արաբականացումն ու մահմեդականացման տարածումն էին այն շրջաններում, որտեղ մարդիկ չէին հարում այս կրոնին: Ես չեմ կարծում, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ձախողումը ինչ-որ կապ ունի այդ պատերազմի հետ, բայց ընդունում եմ, այնուամենայնիվ, որ որեւէ ցեղասպանության ճանաչման ձախողումը կարող է ոգեշնչել նրանց, ովքեր հավատում են, որ իրենք կարող են իրագործել հանցանքն ու անպատիժ մնալ: Ես հավատում եմ նաեւ, որ կան շատ խոչընդոտներ, որոնք խանգարում են իսկապես Հայկական ցեղասպանության ճանաչմանը պետությունների եւ կազմակերպությունների կողմից. նրանք հավանաբար, խուսափում են նեղացնել Թուրքիային, կամ վախենում են իրենց առեւտրային եւ ռազմավարական շահերը վտանգի տակ դնելուց:

**- Դուք ազնվական եք՝ բարոնուհի: Ի՞նչ է պարտադրում այդ տիտղոսը: Ինչո՞վ է ազնվական իր կյանքում... ազնվականը:**

- Ես ազնվական տոհմից չեմ եւ ոչ էլ ազնվական ընտանիքում եմ ծնվել. Լորդերի պալատի անդամ եմ նշանակվել եւ այդպես ստացել բարոնուհու տիտղոսը: Կարծում եմ, որ պատվաբեր է, ինչպես նաեւ՝ պարտադրող բրիտանական խորհրդարանի պալատներից մեկի անդամ լինելը: Ես այդ առավելությունը փորձել եմ օգտագործել «ձայնազուրկների ձայնը» լինելու նպատակով:

**- Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ ընձեռնված բոլոր հնարավորությունների պայմաններում էլ շատերն են թերեւս իրենք իրենց շարունակում անպաշտպան զգալ: Ո՞րն է դեպի առաջ տանող ուժը: Դուք ո՞ր աղբյուրից եք Ձեր ուժերը ստանում կամ վերականգնում:**

- Ես քրիստոնյա եմ եւ իբրեւ այդպիսին պարտավորված եմ զգում հիշել աստվածաշնչյան այն պատվիրանը, որը պահանջում է խոսել զրկվածների համար, օգնել հիվանդներին, հոգ տանել, որ մերկը հագուստ ստանա, իսկ անոթին՝ կերակուր:

**- Եթե Ձեզ հետ որեւէ լրագրողուհի հարցազրույց ունենար, անկասկած կուզենար իմանալ. հատկապես ի՞նչը պետք է հաշվի առնի քաղաքական կամ հասարակական գործունեության դաշտն ընտրած որեւէ կին, եթե իրոք հաջողության հասնել է ուզում:**

- Քանի որ քաղաքական կյանքի թեման շոշափեցիք, ապա կասեմ, որ իմ համոզմամբ, առանձնակի ոչ մի տարբերություն չկա տղամարդկանց եւ կանանց միջեւ: Երկուսի պարտականությունն էլ քաղաքականությունն է՝ եթե դա է նրանց ընտրությունը, որպես իրենց ծառայության դաշտ ընդունելն ու օգտագործելն է:

**- Եվ որպես նախորդ հարցի շարունակություն. որեւէ նպատակին հասնելուց հետո երեւի թե բոլորս ենք անբավարարվածության պես մի բան զգում կամ նույնիսկ հիասթափություն վերապրում:**

- Ինչպես ասացի արդեն, իմ գործունեության անմիջական նպատակը տարբեր կարգի ճնշումներ եւ հետապնդման տառապանքները կրող մարդկանց օգնության հասնելն է, իսկ նման մի գործունեություն, դժբախտաբար, նպատակակետի վերջ պարզապես չունի: Այնպես որ անխուսափելի է ձեր նշած այդ անբավարարվածությունը, մանավանդ երբ զգում ես, որ կարիքի մեջ գտնվող մարդկանց համար չես հասցրել ավելին անել:

**- Ասվում է, որ համակարգիչը փոխեց մարդու կենցաղը, նրա սովորություններն ու առհասարակ՝ կյանքը: Ձեր դեպքում որեւէ բան փոխե՞լ է իրոք: Եթե այո, ապա ի՞նչը:**

- Ես համարում եմ, որ ծայրահեղ արժեքավոր մի բան է համակարգիչը. խնայում է մարդու ժամանակը գրելու եւ հաղորդակցվելու ընթացքում:

**- Վերջում ի՞նչ կցանկանայիք ավելացնել:**

- Ես հուսով եմ, որ կշարունակեմ օգտագործել ամեն մի հնարավորություն, որպեսզի կարողանամ գործել նրանց համար, ովքեր պայքարում են տարբեր բնույթի բռնությունների ու հետապնդումների դեմ, եւ որոնց վիճակը լրատվության միջազգային գործակալությունների կողմից մեծ մասամբ արհամարհվում է (տեղեկությունները դրա մասին դուք կգտնեք՝ այցելելով www.hart-uk.org կայքէջը): Հույս ունեմ, որ ուժերս ներածին չափով շարունակելու եմ Հայաստանի եւ Արցախի ժողովրդի արդարադատության ու ազատության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու փորձը: Կշարունակեմ պայքարել Հայոց ցեղասպանության եւ ներկայումս աշխարհի որեւէ այլ վայրում կատարվող համանման հանցանքների ճանաչման ու դատապարտման համար:

ԱՐԹՈՒՐ ՂՈՒԿԱՍՅԱՆ

# Բանկային սանկցիաները շրջանցելու Իրանի հույսը Հայաստա՞նն է

*1-ին էջից*

**Ինչ վերաբերում է Հայաստանում գործող իրանական «Մելլաթ» բանկին, ապա, Հայաստանի ԿԲ պաշտոնյայի խոսքերը վկայակոչելով, գործակալությունը հայտնում է, որ «Մելլաթ»-ը կտրված է ԱՄՆ-ի, Եվրոպայի եւ այլ երկրների ֆինանսական շուկաներից եւ, ըստ էության, չի համագործակցում հայկական այլ բանկերի հետ: «Մելլաթ»-ի հայկական մասնաճյուղն այլեւս չի կարող ստանալ կամ ուղարկել միջազգային փոխանցումներ, բանկի հաճախորդները հիմնականում իրանցիներ են, ովքեր Հայաստանում բիզնես ունեն, հայեր, որոնք Իրան ապրանք են արտահանում, ինչպես նաեւ իրանցի ու Իրանի հայազգի քաղաքացի ուսանողներ:**

**Այդուհանդերձ, գործակալությունը նշում է, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հունիսին Երեւանում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպման ժամանակ նույնպես անդրադարձել է այս հարցին եւ ԱՄՆ-ի մտահոգությունները՝ Հայաստանի եւ իրանական բանկերի պատժամիջոցների վերաբերյալ, նոր չեն, եւ այդ մասին տեղեկություններ եղել են նաեւ WikiLeaks-ի հրապարակած փաստաթղթերում:**

### Ի՞նչ է ասում Հայաստանի կենտրոնական բանկը

**Reuters-ի հրապարակման կապակցությամբ, այն երկար «շուռումուռ տալուց» հետո, հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ կենտրոնական բանկը: Ընդ որում, հայտարարության առաջին տարբերակը, այն հրապարակելուց հետո, չեղյալ համարեց, ապա նոր տարբերակը տարածեց:**

**«Կենտրոնական բանկը խստագույնս հետեւում է Հայաստանի ֆինանսական կայունությանը վտանգող ցանկացած երեւույթներին» վերնագրով հայտարարության մեջ նշվում է.**

**«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բանկերը, գտնվելով Կենտրոնական բանկի վերահսկողության ներքո, գործում են Հայաստանի Հանրապետության օրենքների, Կենտրոնական բանկի նորմատիվ եւ բանկերի ներքին իրավական ակտերի շրջանակներում: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջին հերթին պարտադրում է բանկերին եւ այլ ֆինանսական կազմակերպություններին իրականացնել բոլոր գործարքների մանրամասն ուսումնասիրություն՝ թույլ չտալու համար միջազգային հանրության կողմից ընդունելի չհամարվող գործառնություններում ներգրավումը:**

**«Մելլաթ բանկ» ՓԲԸ-ն Հայաստանում գործում է դեռեւս 1996թ.-ից, բանկի հաճախորդները հիմնականում Իրան-Հայաստան առեւտրաշրջանառության մեջ ներգրավված փոքր եւ միջին ձեռնարկատերեր են, զբոսաշրջիկներ, ուսանողներ: Բանկի գործառույթները եւ ակտիվների մեծությունը վերջին 3-4 տարիների ընթացքում կտրուկ նվազել են (բանկի ակտիվները 2010թ.-ի դեկտեմբերի 31-ից մինչեւ 2012թ.-ի հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում նվազել են ավելի քան 2 անգամ՝ 88 մլն ԱՄՆ դոլարից կազմելով 40 մլն ԱՄՆ դոլար). բանկը չունի որեւէ թղթակցային հաշիվ ինչպես եվրոպական եւ ամերիկյան բանկերի, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի հետ:**

**Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերը չունեն թղթակցային հարաբերություններ նաեւ Իրանում գրանցված բանկերի կամ ֆինանսական կազմակերպությունների հետ:**

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շարունակելու է խստագույնս հետեւել հայաստանյան բոլոր ֆինանսական կառույցների եւ նրանց հաճախորդների վարքագծին եւ իրականացվող գործառույթներին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը զերծ պահելու համար կայունությանը վտանգող ցանկացած երեւույթներից»:**

**Մնում է միայն հույս հայտնել, որ Հայաստանի բանկերից ոչ մեկում չեն հայտնաբերվի կասկածելի հաշիվներ կամ գործարքներ եւ հայկական ոչ մի բանկ չի ընկնի ԱՄՆ-ի սանկցաների ծանր հարվածների տակ:**

# Ադրբեջանի «սիրիական ուղղությունը»

Սիրիական ճգնաժամի սրումից ի վեր պաշտոնական Բաքվի քայլերը սկսեցին «ներգրվել կոալիցիոն գործողությունների» համատեքստում: Իշխող վերնախավը դադարեցրեց շփումները Սիրիայի օրինական նախագահի եւ կառավարության հետ: Նախապես, իհարկե, հայտարարություններ չարվեցին, ինչպես արեւմտյան երկրներում, թե «Բաշար Ասադը պետք է հեռանա», բայց միաժամանակ ակնհայտորեն հասկացրին, որ պաշտպանում են «ռազմավարական դաշնակից» ԱՄՆ-ի տեսակետը:

Մի շարք լրատվամիջոցներ, որոնց շարքում առաջատարը «Զերկալո»-ն է, բացահայտ գրում են, որ «Մեծ Մերձավոր Արեւելքի աշխարհաքաղաքական նախագծում Ադրբեջանը շահելիք ունի», եւ կառավարությանը «խորհուրդ են տալիս չենթարկվել Մոսկվայի ճնշումներին»: Գրեթե կասկածից դուրս է, որ այդ ամենը գրվում եւ տարածվում է Իլհամ Ալիեւի «լուռ համաձայնությամբ»: Իշխանության քայլերն էլ դա են վկայում: Հուլիսի կեսերին Ադրբեջանը Դամասկոսից իր դիվանագիտական ներկայացուցչությունը տարհանելու որոշում է կայացրել: Այն արդեն իրականություն է դարձել: Որոշ տեղեկություններով, սակայն, դեսպանը Բաքու վերադառնալուց հետո գործուղվել է Թուրքիա, որտեղ էլ գտնվում է Սիրիայում ադրբեջանական դեսպանության ողջ աշխատակազմը:

Օրեր առաջ Սիրիա մուտք է գործել vesti.az-ի լրագրողը: Բայց, որքան էլ զարմանալի հնչի, ադրբեջանցի լրագրողը ինքնիշխան երկրի տարածք է թափանցել ոչ պաշտոնապես: Թուրքիայում տեղակայված «սիրիացի փախստականների ճամբարից» նրան Սիրիայի տարածք է հասցրել «հալեպցի մի արաբ»` իր սեփական մեքենայով: Ադրբեջանցի լրագրողը նկարագրել է թուրք-սիրիական սահմանի` «ապստամբների» վերահսկողությանն անցած հսկիչ անցակետը, որտեղ տերուտնօրինություն են անում Բաշար Ասադի հակառակորդ զինված խմբավորումների ներկայացուցիչները: Հենց նրանք էլ ադրբեջանցի լրագրողի անձնագրում «արել են համապատասխան նշումը»:

Ըստ էության, կիսապաշտոնական կամ գերազանցապես կառավարության տեսակետներն արտահայտող ադրբեջանական լրատվամիջոցի ներկայացուցիչը Սիրիայի պետական սահմանը հատել է ապօրինաբար: Ամենայն հավանականությամբ, դա առաջին դեպքը չէ, բայց հատկանշական է, որ թեման դարձել է հանրության սեփականությունը: Այլ պարագաներում ադրբեջանական կողմը երեւի զգուշանար հրապարակելուց, որ իր քաղաքացին գտնվել է ապստամբների ճամբարում եւ նրանց միջոցով ծանոթացել Սիրիայի իրավիճակին: Եվ եթե դա արվում է անքող, պետք է ենթադրել, որ նշված լրագրողը փաստորեն կատարել է ադրբեջանական հատուկ ծառայությունների առաջադրանքը եւ դրանում նրան օգնել է Թուրքիան:

Ի՞նչ է հետեւում դրանից: Միայն մի բան` Ադրբեջանի կառավարությունը միջամտում է ինքնիշխան Սիրիայի ներքին գործերին` աջակցելով այդ երկրի օրինական նախագահի դեմ զինված պայքար մղող խմբավորումներին: Շատ ակնառու է, որ Սիրիայում ադրբեջանցի լրագրող հայտնվելու մասին լուրը եւ վերջինիս դիտարկումները հրապարակայնացվում են Թուրքիա ԱՄՆ պետքարտուղարի այցից անմիջապես հետո: Իսկ այդ այցի «մեխը» եղել է Բաշար Ասադին տապալելու` ԱՄՆ-Թուրքիա ջանքերը «կոորդինացնելու» հարցը: Այդ կերպ ադրբեջանական կողմը Բաշար Ասադին իշխանությունից հեռացնելու խնդրում շահագրգռված ուժերին, ամենից առաջ` Միացյալ Նահանգներին, փորձում է ներկայանալ որպես «հավասարիմ դաշնակից»:

Ընդ որում, տեղեկատվական «հրետանային նախապատրաստությունը» կարծես միակողմանի չէ: Նույն vesti.az-ը, հղելով ամերիկյան afp.com-ի լրագրող Ջեկ Սոլոմոնին, տեղեկացնում է, որ ամերիկացի լրագրողը Սիրիայի ապստամբների ջոկատներից մեկում հանդիպել է մի վիրավոր ադրբեջանցու: Վերջինս «ջարդված» անգլերենով բացատրել է, որ հեռուստատեսությամբ տեսել է պատերազմը եւ եկել, որ «սիրիացիներին օգնի ազատվելու Ասադից»: Իրակա՞ն է «վիրավոր ադրբեջանցու» մասին պատմությունը, թե՞ հնարովի, տվյալ դեպքում այնքան էլ էական չէ:

Կարեւոր է, որ ամերիկյան հասարակական գիտակցության մեջ ներդրվում է գաղափար, որ «ադրբեջանցիները նույնպես պայքարում են Բաշար Ասադի դեմ»: Բաքվում, ամենայն հավանականությամբ, եկել են վստահության, որ «մերձավորարեւելյան քաղցրաբլիթը կիսելու ժամանակն է» եւ իրենք էլ կարող են «համեղ պատառ ստանալ»: Թերեւս նաեւ այդ պատճառով է, որ Գաբալայի ՌՏԿ-ի հարցով Ռուսաստանի հետ բանակցություններում Ադրբեջանը հետեւողականորեն «գին է բարձրացնում» այնքան, որ Ռուսաստանի Գլոբալիզացիայի եւ սոցիալական շարժումների ինստիտուտի Միջազգային քաղաքականության վերլուծության կենտրոնի տնօրեն Միխայիլ Նեյժմակովը day.az-ին տված հարցազրույցում «դեռ շարունակում է հուսալ», որ Դմիտրի Ռոգոզինի այցը «դժվար է տապալված համարել, եւ բանակցությունները հավանաբար կշարունակվեն»:

Ընդսմին, Նեյժմակովն ասում է, որ Լեռնային Ղարաբաղի հարցով Ռուսաստանի «ակտիվ միջնորդության պիկը կլինի 2013 թվականի աշնանը, երբ Հայաստանում կավարտի ընտրական փուլը»: Այս գնահատականին կարելի էր եւ ուշադրություն չդարձնել, եթե ռուսաստանցի քաղաքագետը մինչ այդ ասած չլիներ, որ ԼՂ հարցով «ցանկացած արդյունավետ բանակցություն ենթադրում է հայկական կողմից զիջումներ առնվազն ԼՂ-ի շրջակա տարածքները «վերադարձնելու» (չակերտները մերն են- Վ. Ա.) մասով»:

Վ. Ա.

# Սուննի-ալեւի բախումներ Լիբանանի հյուսիսում

Լիբանանի հյուսիսում` Տրիպոլի քաղաքում երեկ գիշեր սիրիական հակամարտության պատճառով տեղի են ունեցել բախումներ սուննիների եւ ալեւիների թաղամասերի միջեւ: Ֆրանսպրեսի տվյալներով, վիրավորվել է առնվազն 23 մարդ:

Երեկ առավոտյան փոխհրաձգությունը շարունակվում էր առավելապես սուննիաբնակ եւ Բաշար Ասադի դեմ տրամադրված Բաբ էլ Թաբանեհ թաղամասի եւ Ասադի կողմնակից ալեւիների Ջաբալ Մոհսեն թաղամասի միջեւ: «Ֆիգարո» թերթի կայքէջը հաղորդում է, որ երկու թաղամասերում հրկիզվել են բազմաթիվ տներ, ջարդուփշուր են արվել ավտոմեքենաներ:

Երեկ գիշեր փոխհրաձգությանը խոչընդոտած բանակը հեռացել է երկու թաղամասերի «սահմանազատման գծից»` Սիրիայի փողոցից:

Նավահանգստային քաղաք Տրիպոլիում պարբերաբար տեղի են ունենում Ասադի կողմնակիցների եւ հակառակորդների բախումներ, որոնք երբեմն հանգեցնում են զոհերի: Սիրիական հակամարտությունը սրում է լարվածությունը Լիբանանում, որը երկար տասնամյակ ճանաչել է Սիրիայի գերիշխանությունը եւ բաժանված է Ասադի կողմնակիցների եւ հակառակորդների միջեւ:

# Տիրամոր ամենամեծ արձանը` Պանամայում

Երեւան, 21 օգոստոսի, Արմենպրես: Պանամայում որոշել են կանգնեցնել Տիրամոր` աշխարհում ամենամեծ արձանը: Հաստատված նախագծի համաձայն` արձանի բարձրությունը կանցնի 100 մետրից. դա ավելի բարձր է Նյու Յորքի Ազատության արձանից, որը վեր է խոյանում 93 մետր (պատվանդանի հետ):

Վիթխարի շինությունը կկառուցվի 2013 թվականին մայրաքաղաքի նավահանգստի մուտքի մոտ` Ամերիկայում առաջին կաթոլիկ թեմի ստեղծման 500-ամյակի պատվին, հաղորդում է Արմենպրեսը` հղում անելով turism.ru կայքէջին:

Պանամայի հովանավորուհի Սանտա Մարիա լա Անտիգուան ավանդական պատկերագրության մեջ աջ ձեռքին բռնում է ծաղիկ, իսկ ձախին` մանուկ Հիսուսին, որը խաղում է թռչնի հետ: Հրեշտակները Մարիամի գլխավերեւում բռնում են թագը, իսկ նրա ոտքերի մոտ ծնկաչոք աղոթում են կանայք:

ՍԻՐԻԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ

# Օբամա. «Սիրիա կներխուժենք քիմիական զենքի կիրառման դեպքում»

## *Հալեպում ճապոնացի լրագրողուհի է սպանվել*



ԱՄՆ-ը քննության է առնում Սիրիայում ռազմական միջամտություն իրականացնելու հարցը, եթե Բաշար Ասադի վարչակարգը քիմիական կամ կենսաբանական զենք օգտագործի: Նման հայտարարությամբ երեկ հանդես է եկել նախագահ Բարաք Օբաման: Ռոյթեր գործակալությունը ընդգծում է, որ սիրիական հակամարտության ընթացքում առաջին անգամ ամերիկացիները մասնանշում են իրենց հնարավոր միջամտության պայմանը:

Օբաման նախազգուշացրել է, որ «կարմիր գծի խախտում» կհամարվի ոչ միայն քիմիական կամ կենսաբանական զենքի կիրառումը, այլեւ նման զինանոցների տեղաշարժերը:

Նախագահը նաեւ նշել է, որ ԱՄՆ-ը չի կարող թույլ տալ, որ Սիրիայի քիմիական կամ կենսաբանական զենքը «հայտնվի սխալ ձեռքերում»: Ներկայումս լիակատար վստահություն չկա, թե այդ զինանոցները հուսալիորեն թաքցված են:

Սիրիայի իշխանությունները հուլիսին առաջին անգամ խոստովանեցին երկրում քիմիական եւ կենսաբանական զենքի գոյությունը:

ՄԱԿ-ի դիտորդական առաքելությունը Սիրիայում օգոստոսի 19-ից դադարեցրել է իր գործունեությունը, քանի որ ԱԽ անդամները չեն երկարաձգել դիտորդների աշխատանքի ժամկետը: Երկարաձգման օգտին հանդես էին գալիս Ռուսաստանը եւ Չինաստանը:

Նաեւ հաղորդվում է Սիրիայում հերթական լրագրողի զոհվելու մասին: Տեղական MTV հեռուստաալիքը նշում է, որ օգոստոսի 20-ին Հալեպի Սլեյման ալ Խալիբի թաղամասում սպանվել է 45-ամյա ճապոնացի լրագրողուհի Միկա Յամամոտոն, երբ վերջնագրի ժամկետի ավարտից հետո կառավարական զորքը կրակ է բացել գրոհայինների դիրքերի վրա: Յամամոտոն մասնագիտացած էր զինված հակամարտությունների գոտիներից տրվող ռեպորտաժների ոլորտում: Ճապոնիայի ԱԳՆ-ն երեկ հաստատել է սպանվածի ինքնությունը, ավելացնելով, որ նա Japan Press հեռուստաալիքի զինվորական թղթակիցն էր եւ անցյալում աշխատել էր Աֆղանստանում, Իրաքում, Ուգանդայում, արժանացել էր ճապոնական մրցանակի, մի քանի գիրք էր գրել:

Դարձյալ Հալեպի շրջանում երեկ անհետ կորել են երկու արաբ լրագրողներ եւ մի թուրք: Նրանք Սիրիա էին թափանցել Թուրքիայից:

2011-ի մարտից սկսված հակամարտության ընթացքում Սիրիայում սպանվել է արեւմուտքցի երեք լրագրող: Հունվարի 11-ին Հոմսում մահացու վիրավորվեց ֆրանսիացի զինվորական թղթակից Ժիլ Ժակիեն, որը հայտնի էր Իրաքից, Աֆղանստանից, Կոսովոյից եւ Պաղեստինից հաղորդած ռեպորտաժներով: Փետրվարի 22-ին Հոմսում գնդակոծության ժամանակ սպանվեցին ամերիկուհի Մերի Քոլվինը («Սանդեյ թայմս») եւ ֆրանսիացի լուսանկարիչ Ռեմի Օշլիկը:

# Լոնդոնում թուրք մագնատը դատվեց հափշտակումների համար



Թուրքական ծագումով բրիտանացի գործարար Ասիլ Նադիրը մեղավոր է ճանաչվել իրեն պատկանող բիզնես-կայսրության միջոցների հափշտակման երեք դրվագներով, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Դատարանը շարունակում է քննել Նադիրի դեմ եւս ինը դրվագներով առաջադրված մեղադրանքները: Դրանցից մեկի առթիվ դատարանը նրան մեղավոր է ճանաչել: Դատավճիռը դեռ կայացված չէ:

Քննությունը պարզել է, որ 1980-ականներին Նադիրը իր հաշվին է փոխանցել սեփական ընկերությունների միջոցները` դրանց պատճառելով 235 մլն դոլարի վնաս: Գործարարը իրեն մեղավոր չի ճանաչում:

Նադիրին պատկանող Polly Peck International հոլդինգը 1990-ին հայտարարեց իր սնանկության եւ 550 մլն դոլար պարտքերի մասին: Դրանից կարճ ժամանակ անց գործարարին մեղադրեցին սեփական ձեռնարկությունների փողերի հափշտակման 60 դեպքերի մեջ:

Դատին չսպասելով` Նադիրը 1993-ին փախավ Հյուսիսային Կիպրոս, որը հրաժարվեց նրան հանձնել Մեծ Բրիտանիային: Սակայն 2010-ին գործարարն ինքը վերադարձավ Լոնդոն եւ հայտարարեց, թե մտադիր է դատարանում պաշտպանել իր «ազնիվ անունը»:

ԳՐԱՎԱՃԱՌ

# Շա՞րժ գրախանութի դիմաց



Երեկ անցնելով Մաշտոցի պողոտայով՝ գրախանութներից մեկի առջեւ, մայթի վրա, շարժ նկատեցինք, որը այսօր հայաստանյան իրականության մեջ հազվադեպ հանդիպող երեւույթ է: Պարզվեց «Բուկինիստ» գրախանութը ակցիա է կազմակերպել, որի շրջանակում գրքերից շատերը վաճառվում էին 500 եւ 1000 դրամով: Հատկանշական է, որ արտասահմանյան փորձի կիրառումը Հայաստանում, «**Ազգի**» դիտարկմամբ, լավ արդյունքի է հասնում:

«**Ազգը**» զրուցեց «Բուկինիստ» գրախանութի տնօրեն **Խաչիկ Վարդանյան** հետ, որն անդրադառնալով ակցիային, ասաց. «Ունեինք ծրագիր, որի շրջանակում որոշեցինք նման ակցիա կատարել, որը մեկնարկել է հուլիսի 26-ից եւ կավարտվի սեպտեմբերի 30-ին, սակայն ցանկանում ենք դիմել Քաղաքապետարանին, որպեսզի երկարաձգենք ակցիան: Հետաքրքրական է փաստը, որ գիրք գնում են նաեւ այնպիսի մարդիկ, որոնք գրախանութ երբեք չեն մտել: Փողոցային առեւտուրը ամբողջ աշխարհում է ընդունված եւ անվիճելի փաստ է, որ փողոցում ամեն ինչ լավ է վաճառվում»:

«**Ազգի**» զրուցակիցն ասաց, որ ինքնարժեքից ցածր գնով գրքեր վաճառելը շահեկան չէ գրախանութի համար, սակայն ո՞րն է այս դեպքում գրախանութի շահը հարցին ի պատասխան Խ. Վարդանյանն ասաց. «Մենք ստիպված ենք գնացել այդ քայլին: Նշենք, որ գրախանութում եւս իջեցրել էինք այդ նույն գրքերի գները, սակայն գրախանութի ներսում չէր վաճառվում: Այդ գրքերի գումարներն արդեն վճարել ենք, եւ որոշեցինք ծախսած գումարի գոնե մի մասը ետ բերել»: Անդրադառնալով այն հարցին, թե՞ որն է պատճառը, որ ակցիայի ընթացքում վաճառվում են միայն ռուսերեն եւ անգլերեն գրքեր, եւ չկա ոչ մի հայերեն գիրք, Խ. Վարդանյանն ասաց. «Տեղական հրատարակությունները մեզ տալիս են կոմիսիոն հիմունքով, եւ մենք իրավունք չունենք գների հետ «խաղալու»»:

Արդյոք չե՞ք փորձել համագործակցություն ձեռք բերել հրատարակությունների հետ, որպեսզի ակցիային նրանց կողմից հրատարակված գրքերը եւս վաճառվեն հարցին ի պատասխան գրախանութի տնօրենն ասաց, որ չեն փորձել. «Սպասեք, մեր գրքերը վաճառենք, որից հետո առաջարկություն կանենք»: Անդրադառնալով բազմաչարչար մի հարցի, թե ո՞րն է պատճառը, որ հանրությունն այսօր այդքան էլ շատ գիրք չի գնում՝ համացա՞նցը, թե՞ ֆինանսական վիճակը, Խ. Վարդանյանն ասաց. «Մաթեմատիկական լեզվով՝ սա հավասարում է բազմաթիվ անհայտներով: Ֆինանսականը առաջնային պատճառը չէ, քանի որ, եթե ձեզ գիրք է հարկավոր, ապա դուք բոլոր դեպքերում այն ձեռք կբերեք: Այս խնդիրը տեղային չէ, այլ համաշխարհային աղետ է: Գրքի գնողունակության պակաս ամբողջ աշխարհում կա, սակայն նշենք, որ էլեկտրոնային գրքի վաճառքը եւս չի աճել: Հատկանշական է, որ համացանցից ավելի արագ ես տեղեկատվություն գտնում քան գրքից, սակայն հին սերունդը չի համակերպվում այն մտքին, որ գիրքը կարելի է համացանցով կարդալ, ի տարբերություն նոր սերնդի»:

«**Ազգը**» զրուցեց նաեւ հաճախորդներից մեկի՝ **Նարինե Նեքնեջյանի** հետ, որը շատ գոհ էր ակցիայից. «Հասարակությունը, որը ֆինանսական պատճառով չի կարողանում ձեռք բերել իրեն անհրաժեշտ գրքերը, նման ակցիաների շնորհիվ հնարավորություն է ունենում գնելու»: «**Ազգը**» զրուցեց նաեւ վաճառողի հետ՝ ցանկանալով տեղեկանալ, թե ինչ գրքերի պահանջարկ կա, եւ պարզ դարձավ, որ պահանջարկ է վայելում հատկապես ռուսերեն գեղարվեստական գրականությունը՝ դետեկտիվ, դրամա:

Հուսանք, որ այս խնդիրը կլուծվի՝ սերն առ գիրք: Սակայն ինչ էլ որ անենք, 21-րդ դարն իր գործն անում է, եւ որքան էլ փախչենք իրականությունից, միեւնույնն է՝ հայտնվում ենք համաշխարհային սարդոստայնում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎԱՇԻՆԳՏՈՆ

# Ամառային ծրագրի մասնակիցները Բալյանների ցուցասրահում

Թերճանյան-Թոմաս ամառային փորձառության ծրագրի շրջանակներում» «Հայկական համագումարի եւ Հայ դատի 2012 թվականի մասնակիցները հանդիպել են Համագումարի հոգաբարձուներից տիկին **Ռիտա Բալյանի** հետ, որի ուղեկցությամբ այցելել են նախ Համաշխարհային բանկի մասնաշենքում բացված Բալյանների հայկական արվեստի հավաքածոյի ցուցահանդեսը, որը 2007 թվից գործում է բանկում եւ որտեղ ցուցադրված են Դավիթյանի, Մխիթարյանի, Սիրունյանի, Խառատյանի եւ այլոց կտավները, ինչպես նաեւ Նաքյանի, Չաքմաքճյանի եւ Գազազի քանդակները, ապա Կոնգրեսի գրադարանում՝ հայկական գրատպության 500-ամյակի ցուցահանդեսը, եւ այնուհետեւ հավաքածոն, որն ընդգրկում է Այվազովսկու, Ժանսեմի, Փուշմանի, Մինասի, Սարյանի, Զորյանի, Հակոբյանի, Գորկու եւ այլոց կտավները:

Տիկին Բալյանը ծրագրի մասնակիցներին բացատրել է հայկական համայնքին ծառայելու կարեւորությունը եւ կոչ արել յուրաքանչյուրին կարելիության սահմաններում իր լուման ներդնելու այդ գործում:

Հ. Ծ.

# Խորագիտակ մտավորական եւ հմայիչ անհատականություն

Մարդու կյանքը, ապրած ու աշխատանքային տարիներն անցնում են հարազատ դարձած մարդկանց շրջապատում եւ հաճախ հոգեւոր պահանջ է առաջանում արտահայտելու նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ ունեցած զգացմունքները, հեռավոր ծանոթներին ու անծանոթներին ներկայացնելու մարդուն որպես ազնիվ, բարի ու նվիրված անհատականություն: Առավել եւս դա կենսական անհրաժեշտություն է դառնում այն դեպքում, երբ տասնյակ տարիներ աշխատելով նույն կոլեկտիվում կամ զուտ ընկերական հարաբերությունների շրջանակներում կենցաղային խոսք ու զրույցում բառերով չես արտահայտի այն ամենը, ինչը բնութագրում է նրան: Բայց երբ կան հոբելյանական տարեթվեր եւ դրանք նշելու ավանդույթ, ապա ամեն ինչ ստացվում է բնականոն, ինքնաբուխ եւ նրան բնութագրող գնահատականներն էլ վստահորեն թղթին են հանձնվում: Այդպիսի անձնավորություն է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ Լեւոն Խաչիկի Խչեյանը, ում ծննդյան 70 եւ գիտամանկավարժական գործունեության 45-ամյակը նշվեց վերջերս հարազատ կոլեկտիվում եւ ընկերական շրջապատում:



Լ. Խչեյանը ծնվել է Գեղարքունիքի մարզի Վարդենիս ավանում արհեստավորի ընտանիքում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, դասավանդվող առարկաները յուրացրել նպատակասլաց ջանասիրությամբ, եւ արդյունքը գերազանց գնահատականներով ու արծաթե մեդալով ավարտելն էր: Ընտանիքի հոգսերը թեթեւացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ դպրոցի բարձր դասարաններում սովորելիս ամառային արձակուրդներին աշխատել է կոլտնտեսությունում, իսկ ավարտելուց հետո՝ 1958-1960 թթ.՝ Վարդենիսի շրջսպառմիությունում:

Համալսարանում սովորելու տարիներին նրա եւ համակուրսեցիների միջեւ ձեւավորվեցին ընկերական ջերմ հարաբերություններ, որոնք առ այսօր չեն խամրել եւ դարձել են ավելի իմաստալից ու մտերմիկ: Նրա ուսանողական ընկերներից շատերն այսօր աշխատում են ՀՊՏՀ-ում եւ նրանց առօրյա հանդիպումները համեմվում են անմոռանալի հուշերով, որոնց առանցքը իրենց սիրելի դասախոսներն ու հիշարժան հաճելի դեպքերն են:

Համալսարանն ավարտելուց հետո Լ. Խչեյանը 1965-1966 թթ. ծառայել է խորհրդային բանակում, իսկ զորացրվելուց հետո կարճ ժամանակով աշխատել է ՀԽՍՀ առեւտրի պալատում որպես փորձագետ եւ ապա՝ նշանակվել Երեւանի առեւտրա-տնտեսագիտական տեխնիկումի ցերեկային ուսուցման բաժնի վարիչ՝ միաժամանակ դասավանդել «Քաղաքատնտեսություն» առարկան:

1967 թ. աշնանը Լ. Խչեյանը ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա «Քաղաքատնտեսություն» մասնագիտությամբ, իսկ մի քանի ամիս անց ամբիոնի երաշխավորությամբ աշխատանքի է անցել նույն ամբիոնում՝ որպես ասիստենտ: Համալսարանի տարբեր ֆակուլտետներում դասավանդելուն զուգընթաց 1973 թ. ավարտել է ասպիրանտուրան եւ պաշտպանել թեկնածուական ատենախոսություն բավականին բարդ եւ այդ շրջանում քիչ ուսումնասիրված, բայց նաեւ մեծ հետաքրքրություն ներկայացնող թեմայով՝ կապված մարդկանց շահերի եւ հատկապես նրանց գործունեության հիմքում ընկած տնտեսական շահերի բովանդակության հետ: Նա հետագայում շարունակել է իր հետազոտությունները այդ նույն հիմնահարցի վերաբերյալ, հեղինակ է շուրջ 30 գիտական եւ ուսումնամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ մենագրության, հանրամատչելի գրքույկի, հեղինակակցել է ամբիոնի կողմից հրատարակված երկու ուսումնական ձեռնարկների: Նրա երկու տասնյակից ավելի գիտական հոդվածներն աչքի են ընկնում խորաթափանցությամբ եւ միաժամանակ շարադրանքի պարզությամբ: Նրա գիտական գործունեության մեջ մեծ է եղել ականավոր տնտեսագետ եւ հասարակական գործիչ պրոֆեսոր Մուշեղ Ադոնցի երախտիքը, որը եղել է նրա առաջին դասախոսներից մեկը, իսկ հետագայում՝ գիտական ղեկավարը, ում ծննդյան 100-ամյակը մեծ հանդիսավորությամբ նշվեց ՀՊՏՀ-ում 2010 թ., իսկ մինչ այդ համալսարանում բացվել էր Մ.Հ. Ադոնցի անվան գիտական ընթերցասրահը՝ որպես երախտագիտության նշան անվանի պրոֆեսորի հանդեպ, որն իր բազմաթիվ ասպիրանտներին եւ ուսանողներին ոչ միայն տնտեսագիտություն էր սովորեցնում, այլեւ ներարկում բարոյական բարձր հատկանիշներ՝ ազնվություն, շիտակություն, սկզբունքայնություն եւ պատասխանատվություն:

1975թ., երբ Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հենքի վրա բացվեց Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը, Լ. Խչեյանը դարձավ նորաստեղծ ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնի հիմնադիր անդամներից մեկը: Ինստիտուտում աշխատելու տարիներին սովորել եւ ավարտել է Լենինգրադի պետական համալսարանի դասախոսների որակավորման բարձրացման ինստիտուտը (1974 թ.), հետագայում՝ մասնակցել Մոսկվայի պետական համալսարանում կազմակերպված քաղաքատնտեսության ամբիոնների վարիչների որակավորման բարձրացման դասընթացներին: 1970-80-ական թվականներին մասնակցել եւ զեկուցումներով հանդես է եկել միութենական մի քանի գիտաժողովներում՝ Մոսկվայում, Լենինգրադում, Ադլերում, իսկ զեկուցումներից մեկը հրապարակվել է Խորհրդային Միության տնտեսագիտական ամենահեղինակավոր ամսագրերից մեկում ("Экономические науки", 1979, N6): 1990-ական թթ. Ռուսաստանի Դաշնության մի քանի համալսարաններից դարձյալ հրավիրվել է մասնակցելու գիտաժողովների, սակայն հայտնի պատճառներով հնարավորություն չի ունեցել մասնակցելու:

Լ. Խչեյանը 1991 թ. ընտրվել է ապրանքագիտության եւ առեւտրի էկոնոմիկայի (այժմ՝ մարքեթինգի եւ բիզնեսի կազմակերպման) ֆակուլտետի դեկան եւ պաշտոնավարել մինչեւ 2006 թվականը, իսկ 2006-2011 թթ. համատեղության կարգով աշխատել է որպես ՀՊՏՀ ռեկտորի խորհրդական:

Այսօր նա համալսարանի տնտեսագիտության առաջատար դոցենտներից է, շարունակում է ջանասիրությամբ ու բարձր պատասխանատվությամբ կատարել իր աշխատանքը, եւ մենք նրանից ապագա հաջողությունների հիմնավոր սպասումներ ունենք հատկապես գիտահետազոտական ոլորտում: Իսկ նա, առաջին հերթին, ուրախանում է գիտության, գրականության եւ արվեստի ոլորտներում իր ընկերների ձեռքբերումներով, ում բարոյապես աջակցել է ողջ կյանքի ընթացքում: Առանձնահատուկ ջերմ վերաբերմունք ունի ԵՊՀ իր հասակակիցների հանդեպ, ովքեր այսօր գիտական բարձր աստիճաններ ու կոչումներ ունեն, ղեկավար բարձր պաշտոններ են զբաղեցնում մայր համալսարանում, իսկ նրանց հետ ընկերության հիմքերը դրվել են դեռեւս ուսանողական տարիներին:

Լ. Խչեյանը նկատելի հուզմունքով եւ երախտագիտությամբ է խոսում տնտեսագիտության իր առաջին դասախոսների մասին, ովքեր չէին սահմանափակվում ուսանողին գիտելիք մատուցելով, այլ իրենց իսկ օրինակով ձեւավորում էին մարդկային լավագույն հատկանիշներ եւ ամեն ինչ անում համալսարանական ուսման բովանդակությունից բխող բազմակողմանի զարգացած մասնագետներ պատրաստելու համար: Լ. Խչեյանը նույն հոգատարությունը, հարգանքն ու սրտացավությունն է ցուցաբերում բուհական ոլորտից դուրս ունեցած ընկերների՝ գրողների, կինոգործիչների, դերասանների ու երաժիշտների նկատմամբ եւ արժանանում փոխադարձ հարգանքի:

Լ. Խչեյանը երկարամյա բարեխիղճ աշխատանքի համար պարգեւատրվել է ՀՀ ԿԳ նախարարության եւ ՀՊՏՀ ոսկե մեդալներով:

Բովանդակալից կյանքով է ապրում մեր կյանքը զարդարող այս ազատ եւ անկախ մտավորականը, որի ծննդյան 70-ամյակը շնորհավորում ենք ջերմորեն ու լավագույն մաղթանքներով:

**ԻՇԽԱՆ ԽԼՂԱԹՅԱՆ**
**ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր**
**ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ**
**ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,**
**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**Կինոռեժիսյոր, «Ոսկե ծիրան» ամենամյա կինոփառատոնի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ**

ԱԶԳ

# Մարզական

# Պարաօլիմպիական խաղերում Հայաստանը կներկայացնեն 2 մարզուհիներ

*Հաշմանդամային սպորտն ավելի մեծ ուշադրության կարիք ունի*

Օգոստոսի 29-ից սեպտեմբերի 9-ը Լոնդոնում կայանալիք 14-րդ ամառային պարաօլիմպիական խաղերում Հայաստանը կներկայացնեն ծանրորդուհի **Գրետա Վարդանյանն** ու լողորդուհի **Մարգարիտա Հովակիմյանը**: Նրանք Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության նախագահ, ՀՀ պարաօլիմպիական կոմիտեի նախագահ **Հակոբ Աբրահամյանի** հետ երեկ հյուրընկալվել էին «Պոստ Սկրիպտում» մամուլի ակումբում:



ՖՈՏՈԼՈՒՐ

Հակոբ Աբրահամյանը տեղեկացրեց, որ պարաօլիմպիական խաղերին այս անգամ մասնակցելու են ռեկորդային թվով մարզիկներ (մոտ 4200) 160 երկրներից, որոնք 20 մարզաձեւում վիճարկելու են օլիմպիադայի պարգեւները: Ընդ որում հաշմանդամ մարզիկները մրցելու են այն նույն մարզակառույցներում, որոնցում անցկացվել էին Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերը, բնակվելու են օլիմպիական նույն ավանում: Կրկին տեղի են ունենալու օլիմպիադայի բացման եւ փակման արարողություններ, վառվելու է կրակը:

Հայաստանի 6-հոգանոց մարզական պատվիրակությունը Լոնդոն է մեկնելու օգոստոսի 24-ին: Մարզիկների շքերթի ժամանակ հանրապետության դրոշը տանելու է Գրետա Վարդանյանը: Հակոբ Աբրահամյանը գոհունակությամբ նշեց, որ այս անգամ պետության եւ առանձին կազմակերպությունների կողմից հետաքրքրություն դրսեւորվեց պարաօլիմպիականների նկատմամբ: Խաղերի նախապատրաստության եւ մասնակցության համար պետբյուջեից հատկացվել է 5,8 մլն դրամ: Մարգարիտա Հովակիմյանն իր պարապմունքները անցկացրել է «Գրանդ Սպորտ» մարզահամալիրում, որի ղեկավարությունը հոգացել է նաեւ նրա ծախսերը: Գրետային աջակցել է «Քլինլենդ» ընկերությունը, որի հովանավորչության շնորհիվ ծանրորդուհին բացի Գյումրիում մարզվելուց, վերջին ամիսներին պարապմունքներ է անցկացրել Կարմիր Խաչի վերականգնողական կենտրոնում:

Ըստ պարաօլիմպիական կոմիտեի նախագահի, մեր 2 մարզուհիներն էլ ներկայումս լավ մարզավիճակում են եւ կարող են հաջող հանդես գալ Լոնդոնում: Լավատեսորեն են տրամադրված նաեւ մարզուհիները: Գրետան նշեց, որ մարտականորեն է տրամադրված ու ամեն ինչ անելու է, որպեսզի այս անգամ մեդալով վերադառնա Հայաստան: Նշենք, որ Պեկինում նա անհաջողության էր մատնվել՝ 0 ստանալով: Գրետան 26 տարեկան է, ամուսնացած է, ունի 3 տարեկան դուստր: Նա երկու անգամ արծաթե մեդալի է արժանացել հաշմանդամային ծանրամարտի աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում: Նա պտիտակ քարտով է մասնակցելու պարաօլիմպիադային:

17-ամյա Մարգարիտան խոստովանեց, որ լողն իր սիրած մարզաձեւն է, որով արդեն 7 տարի զբաղվում է ու չի պատկերացնում կյանքն առանց դրա: Նա շատ ուրախ է, որ վերջապես պետք է մասնակցի պարաօլիմպիական խաղերին: Նշենք, որ մեր երկու մարզուհիներից Մարգարիտան օլիմպիական ուղեգիր է ձեռք բերել Ցինցինատիում անցկացված վարկանիշային մրցաշարում: Նա 100 մետրը բրաս լողաոճով հաղթահարել է 2 րոպե 17 վրկ-ում: Մարզումների ժամանակ Մարգարիտան ձգտում է բարելավել այդ ցուցանիշը: Նրա կարծիքով, եթե հաջողվի մրցատարածությունը հաղթահարել 1 րոպե 55 վրկ-ում, ապա հնարավոր է մեդալ նվաճել:

Հայաստանի հաշմանդամ մարզիկները 1996-ից են մասնակցում ամառային եւ ձմեռային պարաօլիմպիական խաղերին: Առայժմ մեր մարզիկներին մեդալ նվաճել չի հաջողվել: Լավագույն արդյունքը գրաված 4-րդ տեղն է: Նման արդյունք է ցույց տվել մեր լեռնադահուկորդը Նագանոյում եւ ծանրորդը՝ Ատլանտայում:

Հակոբ Աբրահամյանը նշեց, որ մեր հաշմանդամ մարզիկները մեծ ներուժ ունեն: Եվ եթե լինեին ֆինանսական ավելի մեծ միջոցներ, ապա հնարավորություն կլիներ մասնակցելու վարկանիշային ավելի շատ մրցումների: Օրինակ, ռազգաստանավային սպորտի շատ լավ թիմ ունենք, որը մարզումներն անցկացնում է Սեւանում: Պետբյուջեով ամեն տարի Հայաստանի պարաօլիմպիական կոմիտեին 3 մլն դրամ է հատկացվում հաշմանդամային սպորտի փառատոնն անցկացնելու համար: Այս տարի ՀԱՕԿ-ը 100-հազարական դրամ հատկացրեց պարաօլիմպիադային նախապատրաստվող մեր 2 մարզուհիներին:

# Արթուր Աբրահամ-Ռոբերտ Շտիգլից մենամարտը՝ օգոստոսի 25-ին

Գերմանիան ներկայացնող հայազգի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Արթուր Աբրահամի եւ WBO վարկածով 2-րդ միջին քաշային կարգում աշխարհի չեմպիոն Ռոբերտ Շտիգլիցի տիտղոսային մենամարտը տեղի կունենա օգոստոսի 25-ին Բեռլինի «02 World» արենայում: Մրցելույթը կցուցադրվի գերմանական ARD հեռուստաալիքով, նաեւ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերում:

Արթուր Աբրահամի վերջին մարզումը, որը բաց մարզում էր լրատվամիջոցների եւ երկրպագուների առջեւ, տեղի է ունեցել այսօր, Բեռլինում: Իր առաջիկա ծրագրերի մասին Արթուր Աբրահամը կխոսի օգոստոսի 25-ին կայանալիք մենամարտից հետո:

«Ինձ մոտ ամեն ինչ հիանալի է: Բավականին երկար ժամանակ է լրջորեն նախապատրաստվել եմ գալիք մենամարտին: Վստահ եմ՝ հաղթելու եմ»,- ասել է Արթուր Աբրահամը:

Հայազգի բռնցքամարտիկը հոգեբանորեն պատրաստ է մենամարտին. նրա մարզիչը՝ Ուլի Վեգները, գոհ է սանի մարզավիճակից: «Հոգեբանորեն պատրաստ եմ մենամարտին: Նման պատրաստվածությունը հաջողության գրավականներից մեկն է: Մարզիկին հոգեբանորեն կարող է պատրաստել միայն մարզիչը: Մարզիկը հոգեբանորեն կտրամադրվի իր մենամարտին այն ժամանակ, երբ մարզիչը նրան կհամոզի դրանում: Մարզիկ-մարզիչ կապը պետք է նման լինի հայր-որդի կապին: Ես այդ պատնեշը հաղթահարել եմ եւ ինձ հոգեբանորեն տրամադրել եմ մենամարտին: Իմ հոգեբանն իմ մարզիչն է, նա է ամեն հարցում ինձ հոգեբանորեն տրամադրում: Ես պատրաստ եմ մենամարտին եւ դա ցույց կտամ օգոստոսի 25-ին», շեշտել է Արթուր Աբրահամը:

Հիշեցնենք, որ այս տարի Արթուր Աբրահամն արդեն 2 հաղթանակ է տոնել. հունվարի 14-ին Գերմանիայի Օֆֆենբուրգ քաղաքի «Բադեն-Արենա» համալիրում Աբրահամն արգենտինացի Պաբլո Օսկար Նատալիո Ֆարիասին մենամարտի 5րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց՝ նվաճելով WBO վարկածով միջին քաշային կարգում Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Եվ երկրորդը՝ Գերմանիայի Քիլ քաղաքի «Sparkassen-Arena»-ում մեր հայրենակիցը միավորների առավելությամբ (118 միավոր) հաղթեց լեհ մրցակցին՝ Պյոտր Վիլշեւսկուն (109 միավոր)՝ վերանվաճելով WBO վարկածով միջին քաշային կարգում Եվրոպայի չեմպիոնի կոչումը:

**ՖՈՒՏԲՈԼ**

# Եղիզարյանը կխաղա Ուկրաինայում

**Ֆուտբոլի ՀՀ հավաքականի կիսապաշտպան Արթուր Եղիզարյանը մինչեւ 2013-ի մայիսը պայմանագիր է կնքել Ուկրաինայի բարձրագույն խմբի առաջնության մասնակից «Գովերլա Զակարպատիեի» հետ: Վերջինս անհաջող է մեկնարկել առաջնությունում՝ 6 հանդիպումներում էլ զիջելով մրցակիցներին: Այս թիմում է հանդես գալիս նաեւ ՀՀ հավաքականի նախկին պաշտպան Եղիշե Մելիքյանը:**

**Հիշեցնենք, որ Եղիզարյանը մինչ այդ հանդես էր գալիս «Խիմկիում», որի հետ պայմանագիրը խզելուց հետո վերադարձել էր «Փյունիկ»: Նրա նորամուտը սպասվում է օգոստոսի 25-ին «Իլիչեւեցի» հետ արտագնա խաղում:**

# Արզումանյանը պայմանագիր կկնքի «ԲՄԱ-Էներգիայի» հետ

**Հայաստանի հավաքականի պաշտպան Ռոբերտ Արզումանյանը մոտակա օրերին պայմանագիր կկնքի ՌԴ 1-ին խմբի առաջնության մասնակից Խաբարովսկի «ԲՄԱ-Էներգիայի» հետ: Հայազգի մարզիչ Ալեքսանդր Գրիգորյանի գլխավորությամբ հանդես եկող այս թիմը 6 տուրից հետո վաստակած 11 միավորով ընթանում է 6-րդ տեղում: Նշենք, որ մինչեւ Խաբարովսկ մեկնելը, Արզումանյանը փորձաշրջան էր անցել նախ «Մորդովիայում», ապա «Կրասնոդարում»: Հենց խաղային պրակտիկայի բացակայության պատճառով Արզումանյանը չէր հրավիրվել Բելառուսի հավաքականի հետ Երեւանում կայացած ընկերական հանդիպմանը:**

# Հաղթարշավը շարունակեց միայն Հայկ Մարտիրոսյանը



**Չեխիայում ընթացող շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունում առանց միավորի կորստի ընթացող հայ շախմատիստներից միայն Հայկ Մարտիրոսյանը 4-րդ տուրում շարունակեց հաղթարշավը: Նրա մրցակիցն Արամ Հակոբյանն էր, որը մինչ այդ 3 անընդմեջ հաղթանակ էր տոնել: 4 տուրից հետո Հայկը նույնքան միավորով Վան Նգուենի, Կասպեր Գրելայի եւ Կոնրադ Դորոզդովսկու հետ գլխավորում է մինչեւ 12 տարեկան շախմատիստների մրցաշարի աղյուսակը:**

**Մինչեւ 14 տարեկան տղաների մրցաշարում Մանուել Պետրոսյանը ոչ-ոքի խաղաց Վլադիսլավ Արտեմեւի հետ՝ կորցնելով առաջին կես միավորը: Դրա հետեւանքով 4 շախմատիստներ՝ Յան-Կրժիժտոֆ Դուդան, Ռադոսլավ Գայեկը, Մաքսիմ Վավուլինն ու Բենց Կորպան շրջանցեցին հայ շախմատիստին ու 4-ական միավորով գլխավորեցին աղյուսակը: 3-ական միավոր ունեն Գոռ Ալեքսանյանն ու Հրանտ Ալեքսանյանը:**

**4-րդ տուրն անհաջող էր մինչեւ 16 տարեկանների մրցաշարի առաջատարներից մեկի՝ Տիգրան Հարությունյանի համար, որը 3 անընդմեջ հաղթանակներից հետո պարտվեց Ավիթալ Բորուչովսկուն: Վերջինս Ռոգեր Մենգի եւ Կասպեր Դորոզդովսկու հետ 4 միավորով գլխավորեց աղյուսակը:**

**Հաջող են հանդես գալիս մեր ամենակրտսեր շախմատիստները: Մամիկոն Ղարիբյանը մինչեւ 8 տարեկանների մրցաշարում 4 տուրից հետո վաստակել է 3 միավոր: Նա հաղթեց Էռնեստ Միսիուկին: Մինչեւ 10 տարեկանների մրցաշարում էլ 3 միավոր ունի Շանթ Սարգսյանը, որն առաջին պարտությունը կրեց Անդրեյ Եսիպենկոյից ու զիջեց առաջատարի դիրքը:**

**Մինչեւ 18 տարեկան տղաների մրցաշարում Հովհաննես Գաբուզյանը հաղթելով Կոնստանտին Նիկոլոգորսկուն, վաստակեց 3,5 միավոր: Նա ընդամենը կես միավոր է զիջում ռուսաստանցի Վադիմ Մոիսեենկոյին:**

**Աղջիկների մրցավեճում Հայաստանի ներկայացուցիչներից առայժմ բոլորից հաջող է հանդես գալիս Մարիա Գեւորգյանը: Նա 4-րդ տուրում հաղթեց Ամալիա Արանազին ու վաստակեց 3,5 միավոր: Աղյուսակը 4-ական միավորով գլխավորում են Տատյանա Խլիչկովան եւ Աիսա Իմեեւան: Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում հանդես եկող մեր մյուս շախմատիստուհին՝ Զուլիետա Գրիգորյանն ունի 2 միավոր: Վատ հանդես չեն գալիս նաեւ Մարիամ Ավետիսյանը (մինչեւ 12 տարեկաններ) եւ Անի Հարությունյանը (մինչեւ 16 տ.), որոնք վաստակել են 3-ական միավոր:**

# Լավագույնը Վարուժան Հակոբյանի արդյունքն է

**Լոս Անջելեսում անցկացված շախմատի միջազգային մրցաշարում հայ շախմատիստներից առավել հաջող հանդես եկավ գրոսմայստեր Վարուժան Հակոբյանը, որը 9 հնարավորից վաստակած 6,5 միավորով գրավեց 3-րդ տեղը: Նա ընդամենը կես միավոր զիջեց Թիմուր Գարեեւին ու Ալդամա Դիոնիսիոյին:**

**6 միավորով 7-րդ տեղը զբաղեցրեց Մելիքսեթ Խաչիյանը: 11-ամյա Սամուել Սեւյանը եւս հաջող հանդես եկավ՝ 5,5 միավորով գրավելով 11-րդ տեղը: 5 միավորով 14-րդ հորիզոնականը զբաղեցրեց Անդրանիկ Մատիկոզյանը: Մրցաշարին մասնակցեց 55 շախմատիստ:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Թաներ Աքչամը ինքն իր եւ հայ-թուրքական հարաբերությունների մասին



Հուլիսի 7-ին «Վարդանանց ասպետների» 94-րդ տարեկան հավաքի ավարտին «Տարվա մարդ» մրցանակին արժանացած, Վուստերի (Մասաչուսեթս) Կլարք համալսարանում Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների ծրագրի ղեկավար, դոկտ. Թաներ Աքչամը իր շնորհակալական ելույթի որոշ կետերի շուրջը բացառիկ հարցազրույց է տվել «Արմինյըն միրըր-սփեքթեյթր» շաբաթաթերթի աշխատակիցներից **Արամ Արքունին** եւ հետաքրքրական դիտարկումներ կատարել ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ ընդհանրապես հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ:

Նա նշել է, որ հայերի հետ իր հարաբերություններում շրջադարձային կետ է եղել 2006-ին հրատարակած իր «Ամոթալի արարք» գիրքը, որին հետեւել են ատելության հետապնդումները «Էրգենեքոն» կիսաստվերային կազմակերպության կողմից:

Այս փաստը նպաստել է, որ փարատվեն հայկական համայնքի կասկածները իր հանդեպ:

Աքչամն ավելացրել է, որ անցած քսան տարիների ընթացքում ինքն էլ է անշուշտ փոխվել, հատկապես քաղաքականապես: Այժմ նա ավելի բաց է եւ հանգիստ: «Երբ ես առաջին անգամ Մ. Նահանգներ եկա 2002-2003 թվականներին, Նյու Յորքում հայկական մի կազմակերպություն ցանկություն հայտնեց մրցանակ շնորհել ինձ: Ես հրաժարվեցի ընդունել մրցանակը: Վախենում էի, նաեւ շատ զգույշ էի, որ քաղաքական որոշակի պահանջներ կներկայացվեն, ասենք՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունն ընդունելու պահանջը եւ այլն: Վախենում եւ զգույշ էի, որովհետեւ հարձակումների թիրախ էի դարձել: Այդ պատճառով էլ փորձում էի ոչ թե հասարակական գործիչ, այլ լոկ հասարակ գիտաշխատող լինել», ասել է նա:

Թուրքիայի հասարակության մեջ կատարվող փոփոխությունները նպաստել են, որ նա դառնա ավելի բաց քաղաքական հարցերում: Այդ փոփոխություններին կարեւոր ազդակ է հանդիսացել Դինքի սպանությունը: «Մինչեւ Դինքի սպանությունը մենք պաշտպանական դիրքերում էինք: Կառավարությունն ու խորքային պետություն կոչվածը անընդհատ հետապնդում էին մեզ, դատարանի մի դահլիճից մյուսը քարշ տալիս մեզ: Հոգեպես ճնշված էինք: Սպանությունից հետո հասարակության հոգեկան վիճակը փոխվեց: Մտածելակերպը՝ նույնպես: Մենք ենք հիմա դրության տերը եւ ցեղասպանության մասին խոսելն այլեւս դավադրական երեւույթ չի դիտարկվում», բացատրել է Աքչամը, շեշտելով, որ այժմ մեծապես ավելացել է առաջադեմ մտավորականների եւ ձախակողմյան կազմակերպությունների (որոնք մինչ այսօր իրազեկված չէին) պաշտպանությունը: Վերջիններս ցեղասպանության թեման դարձրել են իրենց քաղաքական պլատֆորմը: «Բայց մենք, անշուշտ, չպետք է չափազանցնենք, որովհետեւ այդ փոփոխությունն առայժմ տեղական բնույթ է կրում եւ բնորոշ է միայն Անկարային եւ Ստամբուլին», զգուշացրել է թուրք մտավորականը:

Խոսելով Մ. Նահանգներում գտնվող թուրքերի հետ իր հարաբերությունների մասին՝ նա «բարդ» է որակել դրանք, քանի որ այնտեղի համայնքը միատարր զանգված չէ: «Թուրք մեծահասակների մի խումբ կա Ամերիկայում (որոնց մենք «սպիտակ թուրքեր» ենք կոչում), որոնք ազգայնամոլներ են, քեմալականներ եւ թունդ հակահայեր: Նրանք պատկանում են ATAA-ին, այսինքն՝ «Թուրք-ամերիկյան ասոցիացիայի համագումարին»: Այդ խմբակցությունների հետ նրանք էին, որ իմ դեմ ատելության արշավ ծավալեցին: Երկրորդ խումբը հասարակ թուրքերն են, որոնք Ամերիկա են եկել սովորելու կամ աշխատելու: Սրանք առավել կրոնասեր են եւ մեծ մասամբ կապված են «Ֆեթուլլահ Գյուլեն» շարժման հետ: Առաջին խմբի հետ տարակարծությունների մեջ են: Այդ շարժման անդամները փորձում են կապեր հաստատել հայերի հետ: Թուրքիայում նրանց ներկայացուցիչները մասնակցում են «Հրանտ Դինք հիմնադրամի» միջոցառումներին: Նրանցից մեկը նույնիսկ ներողություն խնդրեց հայերից 1915-ի իրադարձությունների համար: Նրանք հասկանում են, որ կապ կա «Էրգենեքոնի» եւ Հայոց ցեղասպանության, Հրանտ Դինքի եւ այլ քաղաքական սպանությունների միջեւ: Եվ ամենակարեւորը, նրանք ցանկանում են սովորել, իրազեկվել, հասկանալ հարցի էությունը», ասել է նա:

Աքչամը նաեւ ավելացրել է, որ Թուրքիայում կառավարությունը հավանաբար «ինչ-որ բան» է պատրաստում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ: «Արտգործնախարար Դավութօղլուն որոշ ակնարկներ է անում իր ելույթներում, մասնավորապես՝ թուրքական քաղաքացիություն ստանալու հնարավորություն ընձեռելու սփյուռքահայերի համար», նշել է նա: «Չնայած չեմ կարծում, որ կառավարությունը համապարփակ ռազմավարություն կամ ծրագիր ունենա այդ մասին»:

«Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը կտրականապես տարբերվում է «Էրգենեքոնից», բացատրել է նա: Իսլամի հանդուրժողական սկզբունքից ելնելով, այդ կուսակցությունը չի կարող ամբողջապես ագրեսիվ տրամադրություններ ունենալ քրիստոնյաների պահանջների հանդեպ: Այս պատճառով է, որ վերանորոգվում են որոշ հայկական եկեղեցիներ: Բայց կառավարության խնդիրն այն է, որ ինքնիշխանությունից ժողովրդավարության անցման շրջանում է: Ներկայումս փակուղու առաջ է, որովհետեւ կարծում է, որ կարող է վերահսկել ամեն ինչ առանց ժողովրդավարական քայլերի»:

Աքչամի հոռետեսության մյուս գործոնը Ադրբեջանի ազդեցությունն է Թուրքիայի վրա: «Թուրքիայի կառավարությունը բաղկացած է չափազանց պրագմատիկ անձնավորություններից: Նրանք ներդրումներ են կատարում Ադրբեջանում եւ իրենց շահերն են հետապնդում՝ առանց մտածելու բարոյական նորմերի մասին: Ադրբեջանը նրանց շատ հեշտությամբ կարող է օգնել, եւ դա տեղի ունեցավ արձանագրությունների հետ կապված հարցում: Ադրբեջանն էր, որ վերջ դրեց արձանագրություններին: Ադրբեջանն է նաեւ, որ խոջալուն օգտագործելով՝ առաջ է քաշում «ձեր ցեղասպանությունն ընդդեմ մեր ցեղասպանության» կարգախոսը», իր մտահոգությունն է ներկայացրել Աքչամը, նշելով, թե «վախենում եմ, որ սփյուռքի թուրք եւ ադրբեջանցի համայնքները միասնաբար պայքարեն հայկական համայնքի դեմ՝ 2015-ին ընդառաջ»:

Հայկական ուսումնասիրություններին անդրադառնալով՝ Աքչամը ասել է. «Մենք ավելի մեծ հետաքրքրասիրություն ենք ակնկալում հայկական համայնքից, ավելի մեծ ֆինանսական ներդրումներ եւ ավելի նպատակաուղղված ծրագրեր»:

Ներկայումս թուրք մտավորականն ուսումնասիրում է Թուրքիայում ցեղասպանության տարիներին հայկական ունեցվածքների առգրավման հարցը:

Պատրաստեց Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

# Սահմանափակենք քնկոտություն հարուցող սնունդը

**Ամերիկացի գիտնականները լուրջ հետազոտության շնորհիվ եզրակացրել են, որ բավական տարածված որոշ մթերքներ անբարենպաստ ազդեցություն են գործում մարդու աշխատունակության վրա եւ հարուցում են քնկոտություն:**

**Ոգելից խմիչքը առաջինն է քնկոտություն առաջացնող մթերքների ցանկում: Հաջորդ տեղում քաղցրավենիքն է, որն արյան մեջ փոփոխում է գլյուկոզայի մակարդակը եւ հոգնածության զգացում է առաջացնում: Երրորդ տեղում հնդկահավի մասին է: Գիտնականները պարզել են, որ դրա սպիտակուցները նվազեցնում են աշխատունակությունը: Արագորեն հոգնածություն է առաջացնում նաեւ ալյուրեղենը, այդ թվում՝ ցորենի սպիտակ ալյուրից պատրաստված մակարոնեղենը: Դրա օգտագործումը հանգեցնում է արյան մեջ արագ յուրացվող գլյուկոզայի տատանումների: Դա սկզբում առաջացնում է եռանդի հորդում, իսկ հետո՝ նույնքան արագ էներգետիկ արտահոսք: Ցանկում հայտնվել է նաեւ տապակած սունկը: Օրգանիզմում այն շատ երկար է մարսվում եւ գրավում է աղեստամոքսային համակարգը:**

Պ. Ք.

ՆՅՈՒ ՅՈՐՔ

# Վախճանվել է Միացյալ Նահանգների քաղաքապետների խորհրդատու Էդվարդ Կոստիկյանը



**«Նյու Յորք թայմսում» տպագրված եւ «Արմինյըն միրըր-սփեքթեյթր» շաբաթաթերթում արտատպված Դենիս Հեւեսի մահախոսականից տեղեկանում ենք, որ Մաունթ Փլեզենտում 87 տարեկանում իր մահկանացուն է կնքել Նյու Յորքի կառավարիչների եւ քաղաքապետների խորհրդական Էդվարդ Նազարի Կոստիկյանը:**

**Ծնվել է Վիհոկենում (Նյու Ջերսի), Թուրքիայից ԱՄՆ գաղթած գորգավաճառի ընտանիքում: Հաճախել է Բրոնքսի Ռիվերդեյլ շրջանի Հորաս Ման վարժարանը, որտեղ մայրն աշխատել է որպես ուսուցչուհի: Այնուհետեւ ավարտել է Կոլումբիա համալսարանը եւ դարձել իրավաբան: Աշխատակցել է քաղաքական գործիչների՝ Նելսոն Ռոքֆելլերի, Ռուդոլֆ Գյուլիանիի, Մարիո Կուոմոյի, Էդվարդ Քոչի եւ այլոց հետ: Մասնակցել է օրենսդրական մի շարք բարեփոխումների, հատկապես կրթական համակարգում: Համաշխարհային երկրորդ պատերազմում ծառայել է Օկինավայում եւ Կորեայում: Ունեցել է նաեւ երաժշտական հակումներ: 1950-ին իր գործընկերոջ՝ Վիլյամ Քանի համագործակցությամբ, հիմնել է նվագախմբային մի ընկերություն, որը համերգներ է տվել Նոր տարվա տոներին:** Հ. Ծ.

# Հոկտեմբերից British Airways-ը Հայաստանում չի գործի

**2012-ի հոկտեմբերից British Airways ընկերությունը կդադարեցնի Երեւան-Լոնդոն-Երեւան չվերթերը: Այս մասին Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունից (ՔԱԳՎ) հայտնել են Panorama.am-ին: Ըստ ՔԱԳՎ մամուլի խոսնակ Նելլի Չերչինյանի՝ BMI ավիաընկերությունը գնել է British Airways-ը եւ շահավետության առումով նպատակահարմար չի գտնում շարունակելու Երեւան-Լոնդոն-Երեւան չվերթերը:** Ի. Պ.

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝**

**ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ -5/12**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքում նախատեսված շինարարական աշխատանքների ձեռքբերման՝ գնման պայմանագիր» (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքում նախատեսված շինարարական աշխատանքների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև սույն 30.08.2012 թվականի ժամը 12:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը):

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝**

**ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ -4/12**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի կապիտալ նորոգման և դահլիճում իրականացվող շինարարական աշխատանքների ձեռքբերման՝ գնման պայմանագիր» (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի կապիտալ նորոգման և դահլիճում իրականացվող շինարարական աշխատանքների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև սույն 30.08.2012 թվականի ժամը 10:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը):

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝**

**ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՊՁԲ -1/12**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին(մասնակիցներին), սահմանված կարգով կառաջարկվի կնքել կտրոններով սեղմված գազի գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար կտրոններով սեղմված գազի ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի մասնագետ Ա. Խաչատրյանին (հեռ. 010 511-787) մինչև 30.08.2012 թվականի ժամը 11:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը), դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 21.8.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: